



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**ԳԻՏԱՆԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԻՄՆԱԿԱՆ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

Մեթոդական ցուցումներ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



ԳԻՏԱՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Մեթոդական ցուցումներ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԳՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 378(072)
ԳՄԴ 74.58
Գ 603

Հրատարակվում է
ԵՊՀ փիլիսոփայության պատմության
ամբիոնի երաշխավորությամբ և
ԵՊՀ ՈՒԳԸ գիտական խորհրդի որոշմամբ

Չեղինակային խումբ՝

*աշխ. գիտ. թեկն., դոց. **Գուրգեն Հովհաննիսյան***
(Գլուխ 1. Բաժին 1, Բաժին 2, Հավելվածներ)

*քաղ. գիտ. թեկն., դոց. **Նարեկ Գալստյան***
(Գլուխ 2. Բաժին 2, Բաժին 3)

*պատմ. գիտ. թեկն., ասիստ. **Սենուա Սողոմոնյան***
(Գլուխ 2. Բաժին 1)

*ասպիրանտ **Միքայել Մալխասյան***
(Ներածություն, Գլուխ 1. Բաժին 2, Վերջաբանի փոխարեն)

Խմբագիր՝

*տեխն. գիտ. թեկն. **Ռուբեն Մարկոսյան***

Գ 603 Գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքները. մեթոդական ցուցումներ / Հովհաննիսյան Գ., Գալստյան Ն., Սողոմոնյան Մ., Մալխասյան Մ.; ԵՊՀ ուսանողական գիտական ընկերություն. - Երևան: ԵՊՀ հրատ., 2014. - 72 էջ:

Սույն աշխատանքում ներկայացվում են գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքները, որոնք կարող են օգտակար լինել ուսանողների և ասպիրանտների համար:

ՀՏԴ 378(072)
ԳՄԴ 74.58

ISBN 978-5-8084-1897-4

© Հովհաննիսյան Գ., 2014
© Գալստյան Ն., 2014
© Սողոմոնյան Մ., 2014
© Մալխասյան Մ., 2014
© ԵՊՀ ՈՒԳԸ, 2014
© ԵՊՀ հրատարակչություն, 2014

Հարգելի՛ ուսանողներ և ասպիրանտներ,

Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը ձեզ է ներկայացնում գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքները պարունակող սույն մեթոդական ձեռնարկը:

Վերջին տասնամյակում ԵՊՀ մի քանի ֆակուլտետներում հրատարակվել են նմանաբնույթ աշխատանքներ, որոնք ուղղված են եղել կոնկրետ մասնագիտական լսարանի: Այս ձեռնարկի պարագայում գործ ունենք ԵՊՀ-ում ներկայացված գրեթե բոլոր մասնագիտությունների մեթոդական առանձնահատկություններն ի մի բերած ընդհանուր ցուցումների հետ:

Նմանօրինակ մեթոդական ձեռնարկն ուսանողակենտրոն ուսուցման պայմաններում կարևոր նշանակություն ունի: Այն հնարավորություն է տալիս ուսանողին և ասպիրանտին՝ ինքնուրույնաբար կատարելագործելու գիտահետազոտական աշխատանք կատարելու հմտությունները: Նման պարագայում ուրախալի է, որ մեթոդական այս աշխատանքի հրատարակումը նախաձեռնել է ԵՊՀ ՈՒԳԸ-ն՝ ուսանողական կառույց, որը մշտապես նպաստել է ԵՊՀ սովորողների շրջանում գիտահետազոտական աշխատանքների կազմակերպմանը և հմտությունների կատարելագործմանը:

Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ հեղինակային խմբում ընդգրկված մասնագետները ներկայացնում են գիտության տարբեր բնագավառներ: Նրանց մեծ մասը տակավին երիտասարդ է, սակայն հասցրել է հրատարակել գիտական աշխատանքներ: Հույս ենք հայտնում, որ նրանց կատարած աշխատանքն ապարդյուն չի անցնի, և մեթոդական ձեռնարկը օգտակար կլինի ԵՊՀ ուսանողների և ասպիրանտների համար:

Արամ Միմոնյան

ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ ուսանողներ և ասպիրանտներ,

Երևանի պետական համալսարանի հիմնադրման 95-ամյակի կապակցությամբ Ուսանողական գիտական ընկերությունը 2014 թ. մարտի 14-16-ը կազմակերպել է «Ինչպե՞ս կատարել գիտահետազոտական աշխատանք» թեմայով գիտապրակտիկ սեմինար, որը գիտահետազոտական աշխատանք կատարելու հմտությունների ուսուցման երկամյա ծրագրի ամփոփիչ գործնական դասընթացն էր: Որպես դասընթացի արգասիք՝ ընթերցողի դատին է հանձնվում մեթոդական համընդհանուր ցուցումներ պարունակող այս աշխատանքը:

Չետաբոբերական է, որ ծրագրի յուրաքանչյուր խոշոր սեմինարի հաջորդել է մեթոդական որևէ աշխատանքի հրատարակում, մասնավորապես՝ տպագրվել են մեթոդական ձեռնարկ և հոդված¹:

Ի մի բերելով ծրագրի երկամյա ժամանակահատվածում կատարած աշխատանքը՝ համալսարանականներին է ներկայացվում գիտահետազոտական աշխատանք կատարելու տեսական դրույթներ և գործնական ցուցումներ պարունակող այս ձեռնարկը:

Այսպիսով, այս աշխատանքը նպատակ ունի՝ օգտակար լինելու ուսանողներին կուրսային, ավարտական աշխատանքներ, գիտական հոդված գրելիս՝ նպաստելով ուսանողների և ասպիրանտների շրջանում գիտական հմտությունների զարգացմանը:

Ներկայացնելով գիտական աշխատանքի տարատեսակները (կրթական որակավորման աշխատանքներից մինչև գիտական հոդված), դրանց ձևավորման հիմնադրույթներն ու մեթոդները, հղումներ կատարելու կարգը՝ հեղինակային խումբը փորձել է հնարավորինս հաշվի առնել յուրաքանչյուր գիտության առանձնահատկությունները: Այդ իսկ նպատակով օգտագործվել է մեծաքանակ գրականություն, որի ցանկը ներկայացված է յուրաքանչյուր թեմայի շարադրանքի վերջում:

Կարծում ենք՝ մեթոդական ցուցումների այս ձեռնարկը կարող է դառնալ ԵՊՉ ուսանողի (և ոչ միայն) գրադարանի կարևոր գրքերից մեկը:

¹ **Յովհաննիսյան Ջ.**, Ինչպես գրել գիտական աշխատանք պատմությունից, Երևան, ԵՊՉ հրատ., 2014: **Մալխասյան Մ.**, Ինչպե՞ս կատարել գիտահետազոտական աշխատանք, «Երևանի համալսարան», 2012, թ. 3, էջ 14:

ԳԼՈՒԽ 1

ԳԻՏԱԿԱՆ ՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏԱՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հետազոտական բնույթի ցանկացած աշխատանք կատարելիս հետազոտողն այս կամ այն չափով առնչվում է գիտությանը: Նման պարագայում հարց է ծագում. ի՞նչ է գիտությունը: Առաջին հայացքից շատ պարզ բացատրություն էնթադրող «գիտություն» հասկացությունն իրականում այդքան էլ պարզ չէ: Գոյություն ունեն այս հասկացության հարյուրավոր սահմանումներ, որոնք, միմյանց փոխլրացնելով, փորձում են ներկայացնել նրա բուն էությունը: Այսպես, գիտությունը նախևառաջ մարդկային գործունեության՝ աշխարհի մասին օբյեկտիվ գիտելիքների մշակման և համակարգման ոլորտ է: Գիտությունը նաև սոցիալական ինստիտուտ է, որը համակարգում և ընդհանրացնում է տարբեր մարդկանց ճանաչողական գործունեությունը: Գիտությունը նաև հասարակական գիտակցության՝ մեթոդական ապարատով օժտված կարևոր մակարդակ է և այլն²:

Եթե փորձենք ընդհանրացնել գիտությունը բնութագրող սահմանումներում առկա ընդհանուր դրույթները, ապա կարող ենք նշել, որ գիտությունը մարդկային ճանաչողության ձև է, որն իր որոշակի մեթոդներով ուղղված է աշխարհի մասին օբյեկտիվ, համակարգված և հիմնավոր գիտելիքների մշակմանը: Փաստորեն, այն ուղղված է նոր գիտելիքի ստեղծմանը և արդեն ստեղծված գիտելիքների հիման վրա աշխարհի գիտական պատկերի ամբողջացմանը:

Արդի հետարդյունաբերական ժամանակաշրջանում գիտությունը կոչված է ապահովելու կայուն զարգացում, այսինքն՝ նրա արդյունքների ստացումը ոչ թե ինքնանպատակ է կամ էլ արդյունաբերական առաջընթացն ապահովող պարզունակ մեխանիզմ, այլ՝ միջոց՝ հասարակության ներդաշնակ և հավասարակշռված զարգացումն ապահովելու համար:

Բուհում սովորելու տարիներին ուսանողը կատարում է իր ուսումնական ծրագրով նախատեսված պարտադիր հետազոտական աշխատանքներ, որոնք երիտասարդ հետազոտողի առաջին քայլերն են դառնում գիտության մեջ: Այդ քայլերը ճիշտ կատարելու համար ուսանողը պետք է տիրապետի գիտահետազոտական աշխատանք կատարելու կարևորագույն սկզբունքներին:

² Մանրամասն տե՛ս Алексеев П. В., Панин А. В., Философия, 4-е изд., Москва, изд. МГУ – “Проспект”, 2010, էջ 370-421:

1.1. ԳԻՏԱՐԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սկսնակ հետազոտողի համար կարևոր է թեկուզև ընդհանուր պատկերացում ունենալ գիտական հետազոտության մեթոդաբանության մասին, քանի որ ինչպես ցույց է տալիս բարձրագույն կրթության ժամանակակից ուսումնական փորձը՝ այդպիսի հետազոտողների մոտ սկզբնական շրջանում ծագում են նախևառաջ մեթոդական և մեթոդաբանական բնույթի հարցեր: Այդ պատճառով իմաստ ունի նշված հարցերը քննարկել մանրամասնորեն:

Ցանկացած գիտական հետազոտություն՝ մտահղացումից մինչև աշխատանքի վերջնական ձևավորումը, իրականացվում է միանգամայն յուրահատուկ մոտեցմամբ: Այնուամենայնիվ, գիտական հետազոտության իրականացման համար կարելի է սահմանել որոշ մեթոդաբանական մոտեցումներ, ինչն էլ կոչվում է ***ուսումնասիրել գիտականորեն:***

Ժամանակակից գիտահետազոտական միտքը ձգտում է թափանցել ուսումնասիրվող առարկաների և երևույթների էության մեջ: Դա հնարավոր է այն պայմաններում, երբ ուսումնասիրվող օբյեկտը քննվում է իր ծագման և զարգացման ամբողջության մեջ, այսինքն՝ ցուցաբերվում է պատմական մոտեցում դրա ուսումնասիրությանը:

Հայտնի է, որ գիտական նոր արդյունքները և անցյալում ձեռք բերված գիտելիքները գտնվում են դիալեկտիկական փոխազդեցության մեջ: Լավագույնն ու առաջավորը հնից անցնում են նորին և նրան տալիս ուժ ու արդիականություն: Երբեմն մոռացված հինը վերածնվում է գիտական նոր հիմքի վրա և ապրում երկրորդ կյանք, բայց արդեն նոր, առավել կատարյալ տեսքով:

Գիտականորեն ուսումնասիրել՝ նշանակում է իրականացնել որոնողական աշխատանք՝ կարծես նայելով դեպի ապագան: Երևակայությունը, երազանքը, որոնք հենվում են գիտության և տեխնիկայի իրական նվաճումների վրա, համարվում են գիտական հետազոտության կարևոր գործոններ: Միաժամանակ, գիտական հետազոտությունը գիտական կանխատեսման հիմնավորված կիրառումն է, կշռադատված հաշվարկը:

Գիտականորեն ուսումնասիրել՝ նշանակում է լինել գիտականորեն օբյեկտիվ. չի կարելի փաստերը մի կողմ դնել միայն այն պատճառով, որ դժվար է դրանք բացատրել կամ գտնել դրանց գործնական կիրառութ-

յունը: Բանն այն է, որ գիտության մեջ նորի էությունը ոչ միշտ է տեսանելի հետազոտողին:

Ուսումնասիրել՝ նշանակում է չափել այն ամենը, ինչ հնարավոր է չափել, ցույց տալ ուսումնասիրվող օբյեկտի կամ երևույթի հարաբերակցությունն արդեն հայտնիի հետ:

Գիտականորեն ուսումնասիրել՝ նշանակում է փնտրել-գտնել պատճառական կապեր ուսումնասիրվող երևույթների, փաստերի և իրադարձությունների միջև:

Գիտականորեն ուսումնասիրել՝ նշանակում է ոչ միայն դիտել, այլև տեսնել, նկատել կարևոր մանրամասնություններ, մեծը՝ փոքրի մեջ՝ այդ ընթացքում, իհարկե, չշեղվելով հետազոտության գլխավոր գծից:

Գիտական հետազոտության ժամանակ կարևոր է ամեն ինչ: Ուշադրությունը սևեռելով թեմայի առանցքային հարցերին, չի կարելի հաշվի չառնել այսպես կոչված անուղղակի փաստերը, որոնք առաջին հայացքից թվում են պակաս նշանակալից: Հաճախ է պատահում, որ հատկապես այդպիսի փաստերն են իրենց մեջ թաքցնում կարևոր հայտնագործությունների սկիզբը:

Գիտական հետազոտությամբ բավարար չէ միայն հաստատել գիտական նոր փաստ. կարևոր է դրան տալ գիտական բացատրություն, ցույց տալ դրա ճանաչողական, տեսական կամ գործնական նշանակությունը:

Հետազոտությունների համար գաղափարները ծնվում են պրակտիկայից, շրջակա աշխարհի դիտարկումներից և կյանքի պահանջներից: Գաղափարների հիմքում ընկած են իրական փաստեր և իրադարձություններ: Կյանքն առաջադրում է կոնկրետ խնդիրներ, բայց միշտ չէ, որ անմիջապես գտնվում են դրանց արդյունավետ լուծումներ: Այդ ժամանակ օգնության է գալիս հետազոտողի կարողությունը՝ առաջադրելու խնդրի լուծման նոր ու արտասովոր եղանակ:

Առաջադրված խնդիրների լուծումն իրականացվում է որպես գիտական հետազոտության պլանաչափ գործընթաց: Թեև գիտության մեջ հայտնի են պատահական հայտնագործություններ, այնուամենայնիվ միայն պլանավորված, ժամանակակից միջոցներով լավ հագեցած գիտական հետազոտությունն է հնարավորություն տալիս բացահայտել և խորությամբ ճանաչել բնության ու հասարակության օբյեկտիվ օրինաչափությունները:

Գիտական հետազոտությունն աշխատատար և բարդ գործընթաց է, որը պահանջում է մշտական բարձր լարվածություն ու ժրաջան աշխա-

տանք: Եթե հետազոտությունը կատարվում է անտարբերությամբ, ապա այն վեր է ածվում արհեստագործության և երբեք էական արդյունք տալ չի կարող: Այն պահանջում է մարդու մտքի և գործողությունների ամբողջ էներգիայի առավելագույն համակենտրոնացում:

Ձեռնամուխ լինելով գիտական հետազոտության՝ առաջին հերթին պետք է յուրացնել այն լեզուն, որով գիտնականները հաղորդակցվում են միմյանց հետ: **Գիտության լեզուն** միանգամայն յուրահատուկ է: Դրանում շատ են մասնագիտական գործունեության մեջ շրջանառվող հասկացություններն ու եզրույթները: Գիտության հասկացությունների ապարատի իմացության աստիճանից է կախված, թե հետազոտողը որքան գրագետ և հասկանալի է կարողանում արտահայտել իր մտքերը, բացատրել այս կամ այն փաստը և այլն:

Գիտության լեզվի հիմքը կազմում են տերմինաբանական բնույթի բառեր և բառակապակցություններ, որոնց մի մասը բերված է սույն ձեռնարկի հավելվածում:

Գիտական հետազոտության ողջ ընթացքը ներկայանում է տրամաբանական հետևյալ սխեմայի տեսքով.

- 1) *Ընտրված թեմայի այժմեականության հիմնավորում,*
- 2) *Չետազոտության նպատակի և խնդիրների սահմանում,*
- 3) *Չետազոտության օբյեկտի և առարկայի սահմանում,*
- 4) *Չետազոտության իրականացման մեթոդի (մեթոդիկայի) ընտրություն,*
- 5) *Չետազոտության գործընթացի նկարագրություն,*
- 6) *Չետազոտության արդյունքների վերլուծություն,*
- 7) *Ստացված արդյունքների գնահատում և հետևությունների ձևակերպում:*

Ընտրված թեմայի այժմեականության հիմնավորումը ցանկացած հետազոտության նախնական փուլն է: Այն չպետք է բազմախոս լինի: Բավական է համակարգչային շարվածքով մեկ էջի սահմաններում ցույց տալ գլխավորը՝ **պրոբլեմային (հիմնախնդրային/խնդրահարույց) իրավիճակի** եռթյունը, որից էլ պարզ է դառնում թեմայի արդիականությունը: Այսպիսով, պրոբլեմային իրավիճակի ձևակերպումը ներածության կարևորագույն մասն է:

Խնդիրը միշտ ծագում է այն ժամանակ, երբ դրսևորվել է հին գիտելիքի անկարողությունը, իսկ նոր գիտելիքը դեռ չի ձևավորվել: Այսպիսով, գիտության մեջ խնդիր ասվածը լուծում պահանջող հակասական իրավիճակն է:

Ձևակերպել գիտական խնդիրը՝ նշանակում է ցույց տալ գլխավորը երկրորդականից տարանջատելու կարողություն, հետազոտության օբյեկտի մասին բացահայտել այն, ինչն արդեն հայտնի է և այն, ինչը դեռևս անհայտ է գիտությանը:

Այսպիսով, եթե հետազոտողին հաջողվում է ցույց տալ, թե որտեղով է անցնում հետազոտության առարկայի մասին իմացության և չիմացության սահմանը, ապա նրան դժվար չէ հստակ և միանշանակ սահմանել գիտական խնդիրը, հետևաբար և՛ ձևակերպել դրա եռությունը:

Ընտրված թեմայի արդիականության հիմնավորումից հետո տրամաբանորեն պետք է անցնել **իրականացվող հետազոտության նպատակի** ձևակերպմանը: Իրականացվող հետազոտության կոնկրետ **խնդիրները** պետք է լուծել ձևակերպված նպատակին համապատասխան: Խնդիրների ձևակերպումը սովորաբար կատարվում է թվարկումների տեսքով՝ **ուսումնասիրել..., նկարագրել..., բացահայտել..., իրականացնել..., սահմանել..., հաստատել..., պարզել..., կապ հաստատել..., որոշել..., նշել..., ապացուցել...** և այլն:

Այդ խնդիրների ձևակերպումներն անհրաժեշտ է կատարել որքան կարելի է հանգամանորեն, քանի որ դրանց լուծման նկարագրությունները պետք է կազմեն աշխատանքի գլուխների բովանդակությունը: Դա կարևոր է նաև այն առումով, որ այդ գլուխների վերնագրերն արտածվում են հետազոտության խնդիրների ձևակերպումներից:

Այնուհետև ձևակերպվում են հետազոտության **օբյեկտը** և **առարկան**: Օբյեկտն այն երևույթն է կամ գործընթացը, որն առաջացրել է պրոբլեմային իրավիճակ և որն ընտրված է ուսումնասիրության համար: Օբյեկտի սահմաններում առանձնանում է առարկան, որը դիտվում է նույն օբյեկտի առանձին մաս, կողմ կամ հատկանիշ:

Հետազոտության օբյեկտը և առարկան՝ որպես գիտական գործընթացի հասկացություններ, իրար հետ հարաբերվում են ինչպես ընդհանուրը և մասնավորը: Օբյեկտում առանձնանում է այն մասը, ինչը ծառայում է որպես հետազոտության առարկա, և հատկապես հետազոտության առարկան է որոշում հետազոտության թեման:

Գիտական հետազոտության կարևոր փուլերից է համարվում **հետազոտության մեթոդների** ընտրությունը: Մեթոդներն այն անհրաժեշտ գործիքներն են, որոնք ծառայում են փաստական նյութի ձեռքբերմանը:

Հետազոտության գործընթացի նկարագրությունը հետազոտական աշխատանքի հիմնական մասն է, որտեղ լուսաբանվում են հետազոտության մեթոդիկան և տեխնիկան՝ տրամաբանության օրենքների և կա-

նոնների կիրառմամբ: Չիմանալով տրամաբանության օրենքներն ու կանոնները, չկարողանալով կիրառել դրանք՝ հնարավոր չէ մտածել գիտական արդյունավետ գործունեության մասին:

Գիտական հետազոտության եզրափակիչ փուլը համարվում են **հետևությունները**: Դրանք բովանդակում են այն նորն ու էականը, որոնք պարունակում են կատարված գիտական հետազոտության տեսական և գործնական արդյունքները:

Հետազոտական աշխատանքի կատարման հաջողությունը մեծապես կախված է հետազոտության արդյունավետ **մեթոդների** ընտրությունից: Հետազոտության մեթոդների միջոցով են հասնում առաջադրված նպատակների իրականացմանը:

Գիտական հետազոտության մեթոդներն ընդունված է բաժանել 2 խմբի՝ **ընդհանուր և հատուկ մասնագիտական**:

Գիտական ճանաչողության ընդհանուր մեթոդները սովորաբար բաժանվում են երեք մեծ խմբի.

- 1) *Եմպիրիկ հետազոտության մեթոդներ* (դիտում, համեմատություն, չափում, գիտափորձ կամ փորձ, մոդելավորում),
- 2) *Մեթոդներ, որոնք կիրառվում են հետազոտության ինչպես Եմպիրիկ, այնպես էլ տեսական փուլում* (վերացարկում, վերլուծություն, համադրություն, ինդուկցիա, դեդուկցիա),
- 3) *Հետազոտության տեսական մեթոդներ* (վերացականից դեպի կոնկրետը և այլն):

Դիտումներն իրենցից ներկայացնում են ճանաչողության ակտիվ գործընթաց, որն առաջին հերթին հենվում է մարդու զգայարանների վրա: Դիտումներն Եմպիրիկ մեթոդներից ամենից տարրականն են: Արդյունավետ դիտումների համար անհրաժեշտ է որոշ պահանջների կատարում՝ պլանաչափություն, նպատակամղվածություն, ակտիվություն, համակարգայնություն:

Համեմատությունը ճանաչողության առավել տարածված մեթոդներից է, և պատահական չի ասվում, որ «ամեն ինչ ճանաչվում է համեմատության մեջ»: Համեմատությունները հնարավորություն են տալիս՝ գտնելու իրականության առարկաների և երևույթների նման ու տարբերակիչ գծերը: Համեմատությունների միջոցով բացահայտվում է այն ընդհանուրը, որը հատուկ է երկու կամ մի քանի օբյեկտների, իսկ երևույթներում կրկնվող ընդհանուրի բացահայտումն այն ճանապարհն է, որը տանում է դեպի ճանաչողության օրենքների և օրինաչափությունների հաստատումը:

Համեմատական մեթոդը ենթադրում է որոշակի սկզբունքներ, որոնցից առաջինն այն է, որ կարելի է համեմատել այնպիսի օբյեկտներ և երևույթներ, որոնք ունեն որոշակի ընդհանրություն, իրենց էությամբ ու բովանդակությամբ միատեսակ են:

Երկրորդ սկզբունքն այն է, որ պետք է համեմատվեն նույնատեսակ օբյեկտների և երևույթների առավել էական հատկանիշները:

Չափումները համարվում են ճանաչողության առավել ճշգրիտ միջոցներ: Դրանք քանակական որոշակի տեղեկություններ են տալիս շրջապատող իրականության մասին: Չափումների գիտական արժեքն ստացված արդյունքների ճշգրտությունն է, որը կախված է կիրառվող չափիչ սարքերից:

Գիտական ճանաչողության էմպիրիկ մեթոդների շարքում չափումներն այնքան մեծ նշանակություն ունեն, որքան համեմատությունները և դիտումները:

Դիտումների մասնավոր դեպքը **գիտափորձն** է, որի առավելություններից են.

- 1) Հնարավոր է դարձնում այս կամ այն երևույթի ուսումնասիրումը «մաքուր վիճակում»,
- 2) Հնարավորություն է տալիս իրականության օբյեկտների հատկություններն ուսումնասիրելու արտասովոր պայմաններում,
- 3) Կարևորագույն արժանիքներից է կրկնելիությունը,
- 4) Կարելի է իրականացնել ինչպես անմիջականորեն ճանաչողության օբյեկտի, այնպես էլ դրա «փոխարինիչի»՝ **մոդելի** հետ:

Հետազոտության էմպիրիկ և տեսական մակարդակներում կիրառվող մեթոդներից են վերացարկումը, անալիզը և սինթեզը, ինդուկցիան և դեդուկցիան:

Վերացարկումը մտավոր գործունեության մեջ կրում է ունիվերսալ բնույթ, քանի որ մտքի յուրաքանչյուր քայլ կապված է դրա գործընթացի կամ արդյունքի կիրառման հետ:

Վերացարկումը թույլ է տալիս մտովի անտեսել հետազոտվող օբյեկտների կամ երևույթների ոչ էական հատկանիշները, հարաբերությունները, միաժամանակ առանձնացնել, ընդգծել հետազոտողին հետաքրքրող դրանց մեկ կամ մի քանի կողմերը: Տրամաբանական մտածողության համակարգում վերացարկումը սերտորեն կապված է հետազոտության մյուս մեթոդների և առաջին հերթին՝ **վերլուծության** և **համադրության** հետ:

Վերլուծությունը (անալիզը) համարվում է գիտական հետազոտության մեթոդ, որի գործադրմամբ առարկան տարրաբաժանվում է բաղկացուցիչ մասերի: **Համադրությունը** (սինթեզն) ընդհակառակը, վերլուծությամբ առանձնացված մասերի միացումն է մեկ ամբողջի մեջ: Գիտական հետազոտություններում այդ երկու մեթոդներն օրգանապես կապված են իրար հետ և կարող են ընդունել տարբեր ձևեր՝ կախված ուսումնասիրվող օբյեկտի հատկությունից և ուսումնասիրության նպատակից:

Դեդուկցիան ընդհանուրից դեպի մասնավորն ընթացող տրամաբանական մտահանգման տեսակ է:

Ինդուկցիան մասնավոր՝ առանձին փաստերից ու դրույթներից, ընդհանուր եզրակացություններ կատարելու տրամաբանական մտահանգման տեսակ է:

Չարգացող բարդ օբյեկտների հետազոտությունների համար կիրառվում է **պատմական** մեթոդը: Այն կիրառվում է միայն այն դեպքում, երբ այս կամ այն կերպ հետազոտության առարկա է դառնում օբյեկտի պատմությունը:

Յետազոտական աշխատանքի կարևորագույն փուլերից է դրա տեքստային ձևակերպումը: Գիտական հետազոտության տեքստն այլ տեքստերից տարբերվում է առաջին հերթին իր տրամաբանականությամբ: Ուստի որպեսզի թույլ չտրվեն տրամաբանական բնույթի սխալներ, անհրաժեշտ է գիտենալ տրամաբանության հիմնական օրենքները՝ Նույնության, Հակասության, Երրորդի բացառման, Բավարար հիմունքի:

Նույնության օրենքը պահանջում է, որ յուրաքանչյուր միտք որոշակի, հաստատուն իմաստով կիրառվի կշռադատության ողջ ընթացքում: Նույնության օրենքի իմաստն այն է, որ նրա պահանջին հետևելով՝ պահպանում ենք մեր մտքերի որոշակիությունը կշռադատելու ընթացքում:

Հակասության օրենքի համաձայն՝ երկու հակադիր դատողություններ միաժամանակ չեն կարող ճշմարիտ լինել: Հակասության օրենքի նշանակությունն այն է, որ նրա պահանջին հետևելով՝ պահպանում ենք մեր մտքերի անհակասականությունը կշռադատելու ընթացքում:

Երրորդի բացառման օրենքը կոնկրետացնում է հակասության օրենքի պահանջը և, տարածվելով միայն հակասող դատողությունների վրա, ստանում է, որ երկու հակասող դատողություններից մեկն անպայման ճշմարիտ է, իսկ մյուսը՝ կեղծ, երրորդ ելքը բացառված է: Այս օրենքի նշանակությունն այն է, որ նրա պահանջը կատարելով՝ ապահովում ենք մեր մտքի հետևողականությունը:

Բավարար հիմունքի օրենքի համաձայն յուրաքանչյուր ճշմարիտ միտք կշռադատության ընթացքում պետք է անհրաժեշտաբար բխի այլ մտքերից, ունենա իր տրամաբանական հիմքը, լինի հիմնավորված: Բավարար հիմունքի օրենքի նշանակությունն այն է, որ, այդ օրենքի պահանջին հետևելով, մենք ապահովում ենք մեր մտքերի հիմնավորվածությունը:

Այսպիսով, գիտահետազոտական աշխատանքի կատարումն ունի իր որոշակի մեթոդաբանությունը: Տարբերակված լինելով գիտության տարբեր բնագավառների համար՝ գիտական հետազոտությունները, այդուհանդերձ, ունեն ընդհանուր գիտամեթոդաբանական դրույթներ:

Օգտագործված գրականություն

1. **Բրուսյան Գ.**, Տրամաբանություն, Եր., «Գիտություն» հրատ., 1998, 213 էջ:
2. **Գաբրիելյան Վ.**, Գրավոր խոսք, Եր., ԵՊՅ հրատ., 2007, 296 էջ:
3. **Վալեսյան Լ.**, Հասարակական աշխարհագրության ներածություն, Եր., «Լույս» հրատ., 1999, 228 էջ:
4. **Кузин Ф.**, Магистерская диссертация. Методика написания и правила оформления. Методическое пособие, М., “Мамармен”, 1993, 45 с.
5. **Кузин Ф.**, Дипломная работа. Методика написания, правила оформления и порядок защиты. Методические указания, М., “Изд-во МПИ”, 1990, 50 с.

1.2. ԳԻՏԱՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ

Գիտական ճանաչողության մեթոդաբանական կազմակերպման ժամանակ կարևոր հարց է ծագում՝ ո՞րն է գիտական աշխատանքի կատարման հիմնական ձևը: Ինչպես արդեն ասվել է, գիտական աշխատանքի կատարման հիմնական ձևը **գիտական հետազոտությունն է**, այլ կերպ ասած՝ **գիտահետազոտական աշխատանքը**:

Իսկ ո՞րն է գիտահետազոտական աշխատանքի հիմնական սկզբունքը: Այս հարցը մշտապես հուզել է գիտական հանրությանը՝ սկսած անտիկ շրջանից մինչև մեր օրերը: Ի մի բերելով հարցի առնչությամբ արտահայտված տեսակետները՝ կարող ենք փաստել, որ գիտահետազոտական աշխատանքի հիմնական սկզբունքն է որպես ճշմարտություն ընդունել այն ամենը, ինչ ապացուցված է գիտական մեթոդներով և ներկայացված է որոշակի հստակությամբ:

Գիտահետազոտական աշխատանքները, այդուհանդերձ, միատեսակ չեն, և պայմանականորեն դասակարգվում են ըստ համապատասխան գործառույթի կամ հատկության: Գիտահետազոտական աշխատանքները կարելի է պայմանականորեն դասակարգել ըստ՝

1. *գիտելիքների մակարդակի (տեսական և էմպիրիկ)*
2. *հասարակական գործառույթի (ճանաչողական և գործնական)*
3. *ներկայացման ձևի (հրատարակում և հրատարակում):*

Գիտահետազոտական աշխատանքներն ըստ գիտելիքների մակարդակի դասակարգելիս նկատի է առնվում *հետազոտության հիմքը*, այսինքն՝ հետազոտության այն ձևը, որը տվել է գիտական արդյունք: Այս պարագայում կարելի է պայմանականորեն առանձնացնել **տեսական** և **էմպիրիկ** գիտահետազոտական աշխատանքներ, որոնցից առաջինի հիմքը *տեսական հիմնադրույթներն* են, իսկ երկրորդինը՝ նախևառաջ *գիտափորձը* (տե՛ս Աղյուսակ 1): Այս դասակարգումը խիստ պայմանական է, քանի որ հազվադեպ են հանդիպում գիտահետազոտական աշխատանքներ, որոնք հիմնված են միայն դիտարկումների ու գիտափորձի, կամ միայն տեսական ձևակերպումների վրա:

Աղյուսակ 1. Գիտահետազոտական աշխատանքների դասակարգումը՝ ըստ գիտելիքների մակարդակի (հիմքի)

Տեսական	Էմպիրիկ (փորձառական)
Չետազոտության ձև, որը հիմնված է զգալի թվով գիտական աղբյուրների ներգրավման, քննման և ընդհանուր դրույթների առանձնացման վրա՝ պահանջելով խոր գիտելիքներ տվյալ գիտության պատմության, տեսության և մեթոդաբանության մեջ:	Չետազոտության ձև, որը հիմնված է դիտարկումների և գիտափորձի վրա՝ անմիջապես ուղղված լինելով ուսումնասիրության օբյեկտին:

Գիտահետազոտական աշխատանքները կարելի է դասակարգել նաև ըստ *հասարակական գործառույթի* (տե՛ս Աղյուսակ 2): Տվյալ պարագայում կարևոր է դիտարկել տվյալ հետազոտության *նպատակը*, այսինքն՝ ոչ թե զուտ գիտական եզրակացությունը, այլ վերջինիս նշանակությունը գիտական հանրության և առհասարակ հասարակության համար:

Աղյուսակ 2. Գիտահետազոտական աշխատանքների դասակարգումը՝ ըստ հասարակական գործառույթի (նպատակի)

Ֆունդամենտալ (հիմնարար)	Կիրառական
Չետազոտության ձև, որի նպատակն է հասարակության մտավոր ներուժի զարգացումը տեսությունների մշակման ու հստակեցման կամ վերանայման միջոցով: <i>Բանալի բառ՝</i> տեսական հիմնադրույթներ	Չետազոտության ձև, որի նպատակն է կայուն զարգացման ապահովման համար ինովացիոն գործընթացների ապահովումը՝ ենթադրելով հետազոտության արդյունքների կիրառումը գործնականում: <i>Բանալի բառ՝</i> գործնական կիրառելիություն

Գիտահետազոտական աշխատանքները կարևոր է դասակարգել ոչ միայն ըստ հիմքի կամ գործառույթի, այլև՝ *ներկայացման ձևի*: Շատ հաճախ թյուր կարծիք է ստեղծվում, թե գիտաշխատողը պետք է մշտապես զբաղվի միայն հետազոտություններով՝ մոռացության մատնելով դրանց արդյունքների ամփոփումը որոշակի ձևով: Մինչդեռ շատ կարևոր է ստացված արդյունքի ներկայացման ձևը: Չետևաբար գիտահետազոտական աշխատանքները դասակարգվում են նաև ըստ ներկայացման ձևի (տե՛ս Աղյուսակ 3):

**Աղյուսակ 3. Գիտահետազոտական
աշխատանքի ներկայացման ձևերը**

<p>Գիտական հաշվետվությունը փաստաթուղթ է, որը ներկայացնում է կատարված գիտահետազոտական աշխատանքի նպատակը, խնդիրները, դրանց լուծման ուղղությամբ կատարված քայլերը, հիմնավորումը, արդյունքը և եզրակացությունը:</p>		
<p>Գիտական զեկուցումը գիտահետազոտական աշխատանքի արդյունքների ամփոփ ներկայացնում է գիտական որևէ միջոցառման ժամանակ:</p>	<p>Գիտական հրատարակումը գիտահետազոտական աշխատանքների հրատարակումն է տպագիր կամ էլեկտրոնային տարբերակով:</p>	<p>Որակավորման աշխատանքը հրապարակային պաշտպանության ենթակա հետազոտական աշխատանք է, որը կատարվել է՝ գիտական կամ կրթական աստիճան հայցելու համար:</p>

Գիտահետազոտական աշխատանքների ներկայացման հիմնական նպատակն ստացված արդյունքի հանրահռչակումն է, քանի որ տվյալ արդյունքը գիտության մաս կարող է դառնալ միայն հրապարակումից հետո: Հրապարակման գիտական հարթակը գիտաժողովներն են, որտեղ էլ հետազոտողը **գիտական զեկուցմամբ** հրապարակում է իր գիտական հետազոտության արդյունքները:

Վերջին տարիներին զգալի տարածում է գտել գիտական հետազոտության արդյունքների նախնական կամ նույնիսկ ամբողջական հրապարակումը գիտական հիմնարկների պաշտոնական կայքերում: Նույնիսկ եղել են դեպքեր, երբ որևէ գյուտ կամ հայտնագործություն առաջին անգամ ներկայացվել է գիտահանրամատչելի ֆիլմի միջոցով: Այսպես, 2009 թ. Նորվեգացի գիտնական Յ. Հուրումն անգլիական առաջատար մի քանի հեռուստաընկերություններով ցուցադրեց հայտնաբերված հնագույն պրիմատներից մեկի՝ 47 մլն տարեկան Դարվինիոսի հայտնագործումը ներկայացնող հետաքրքիր ֆիլմ, որը հակասական ընդունելության արժանացավ գիտական հանրության կողմից: Քննադատները նշում էին, որ անհրաժեշտ էր նախապես գիտական շրջանակներում քննարկել հայտնագործությունը և դրանից հետո միայն ցուցադրել գիտահանրամատչելի ֆիլմը:

Այսպիսով, գիտական հանրության համար առաջնային են շարունակում դիտարկվել գիտական զեկուցումները գիտաժողովներում, քանի որ այստեղ ծավալվում են գիտական քննարկումներ տարբեր գիտնական-

ների միջև, և հետագոտողը կարողանում է բացահայտել իր իսկ կատարած հետազոտության թույլ և ուժեղ կողմերը:

Հրապարակման գործընթացի կարևոր բաղադրիչ է **հրատարակումը**, որը կատարվում է տպագիր կամ առցանց տարբերակով: Հրատարակումը հնարավորություն է ընձեռում, որպեսզի գիտական հետազոտության արդյունքները հասանելի դառնան առավել լայն լսարանի: Հետագա հետազոտություններում ուսումնասիրողներն արդեն հնարավորություն կունենան՝ օգտագործելու իրենց հետազոտությանն առնչվող թեմաների շուրջ հրատարակված աշխատանքները՝ կատարելով համապատասխան հղում: Փաստորեն, հրատարակումը գիտության զարգացման շարունակականությունն ապահովող կարևոր միջոց է, որի շնորհիվ կատարված հետազոտությունների արդյունքներն ամրագրվում են և փոխանցվում գիտական հանրությանը:

Հարկ է նշել, որ գիտահետազոտական ցանկացած աշխատանք բանավոր կամ գրավոր ներկայացնելիս կարևոր է նախապես կազմել տվյալ հետազոտության գիտական հաշվետվությունը (տե՛ս Աղյուսակ 3): Վերջինս կարող է ուղենիշ դառնալ թե՛ **գիտական զեկուցման** և թե՛ **գիտական հոդվածի** համար, քանի որ պարունակում է աշխատանքի առանցքային դրույթները: Շատ հաճախ գիտական հաշվետվությունը տրվում է գիտական զեկուցման համար հրատարակվող **հիմնադրույթների (թեզիսի)** ձևով, քանի որ այստեղ կարևոր նշանակություն ունի աշխատանքի նպատակի, խնդիրների, դրանց լուծումների, փաստարկների և եզրակացությունների շարադրումը:

Ինչպես տեսնում ենք վերը նշված օրինակներից, գիտական հրատարակությունները ևս ունեն իրենց տարատեսակները՝ զեկուցման հիմնադրույթներից ու գիտական հոդվածից միևնույն մենագրություն (տե՛ս Աղյուսակ 2): ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության աշխատանքներում ավանդույթ է դարձել հատկապես գիտական հոդվածների ժողովածուների հրատարակումը:


Հոդվածը գիտական աշխատանքների տեքստերի մեջ ամենագործածականն է: Այն մեկ կամ մի քանի ոչ մեծ խնդիրներ առաջադրող և լուծող, փոքր ծավալով գիտական աշխատանք է, որը հրապարակվում է գիտական հանդեսներում կամ ժողովածուներում, երբեմն՝ լրագրերում:

Հոդվածը կարող է լինել որևէ որոշակի փորձի, խնդրի լուսաբանում, լուծում, ինչպես նաև գիտության տեսական խնդիրների քննություն:

Հոդվածները լինում են **տեսական** և **պրոբլեմատիկ**: Առաջինն անդրադառնում է տեսական բնույթի որոշակի խնդիրների, իսկ երկրորդը

առաջ է քաշում գործնական որևէ կոնկրետ հիմնախնդիր կամ խնդիր՝ ցույց տալով դրա լուծումը կամ լուծման գործնական ճանապարհը:

Գծապատկեր 1. Գիտական հրատարակումների հիմնական տեսակները



Գիտահետազոտական աշխատանքները ուսումնական գործընթացում: Քննարկելով գիտահետազոտական աշխատանքների կարևորությունը գիտական հանրության և առհասարակ հասարակության համար՝ կարևոր է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ հետազոտական աշխատանքները բարձրագույն կրթության հիմնական բաղադրիչներից են: Հետազոտական կրթամասը ՀՀ արդի բուհական համակարգում ուսումնական ծրագրի կարևորագույն մասերից է, քանի որ ուսանողի մեջ դաստիարակում է մասնագիտական-հետազոտական հմտություններ հայցվող կրթական աստիճանին համապատասխան մակարդակի համար: Տվյալ պարագայում կատարված հետազոտական աշխատանքը գուցե այդքան էլ կարևոր չի լինի գիտական հանրության համար, սակայն կպայ-

մանավորի տվյալ ուսանողի կրթական աստիճանի որակավորումը: ՀՀ բուհական և ակադեմիական համակարգում համադրված են բոլոնյան և նախկին խորհրդային կրթական համակարգերի հիմնական սկզբունքները, և ըստ այդմ գործում է կրթական աստիճան հայցելու աշխատանքի երկու տեսակ՝ **բակալավրի ավարտական աշխատանք** և **մագիստրոսական թեզ**: Գիտական աստիճան հայցելու համար ևս առկա է որակավորման աշխատանքի երկու մակարդակ՝ **թեկնածուական և դոկտորական աստ-նախոսություններ**:

Բակալավրիատում կարևոր է նաև **կուրսային աշխատանքը**, որը ավարտական աշխատանքից առաջ նախապատրաստական փուլ կարծես լինի թե՛ ներկայացվող պահանջների և թե՛ անցկացման առումով: Այն ըստ էության ուսանողի անհատական առաջին գիտական աշխատանքն է և կարող է մեծապես նպաստել նրա ստեղծագործական և գիտական կարողությունների հետագա դրսևորմանը, մասնագիտության մեջ խորացմանը:

Կուրսային աշխատանքների համար առաջադրվում են այնպիսի թեմաներ, որոնք ուսանողին կարող են տալ ինքնուրույն եզրահանգումներ անելու հնարավորություն: Աշխատանքում ուսանողը պետք է կարողանա հստակեցնել ինդիկները, կատարել կառուցվածքային բաժանումներ, խորանալով թեմայի մեջ՝ անել ընդհանրացումներ, հաստատել կամ վիճարկել այդ թեմայով գրականության մեջ եղած կարծիքները՝ մեջբերելով դրանք: Միաժամանակ ուսանողը պետք է խուսափի ծավալուն և հաճախակի մեջբերումներից:

Կուրսային աշխատանքի ծավալը, ըստ մասնագիտության և նյութի բարդության, կարող է տատանվել 20-25 էջի սահմաններում: Բնական և տեխնիկական գիտությունների առանձին մասնագիտացումների պարագայում ուսանողները երբեմն գրում են կուրսային աշխատանք նույնիսկ 10 էջի սահմաններում:

Աշխարհի առաջատար բուհերում կուրսային աշխատանքի փոխարեն տրվում է ամենամյա հետազոտական աշխատանք: Նման աշխատանք թույլատրվում է գրել անգամ մի քանի առարկայից՝ երբեմն նույնիսկ լսարանային պարապմունքների փոխարեն: Առաջատար բուհերի ու գիտահետազոտական կենտրոնների մեծ մասում գիտական աստիճանը մեկն է:

Ուսումնական գործընթացում գիտահետազոտական աշխատանքի կատարման ընթացքը գիտական ղեկավարի հետ նախանշելիս ուսանողի մոտ հարց է ծագում՝ որո՞նք են հետազոտության անհրաժեշտ բաղադրիչները: Դրանք են՝

1) Անվանաթերթ

- 2) Բովանդակություն (ցանկ)
- 3) Ներածություն (մեթոդաբանական դրույթներ)
- 4) Հիմնական մաս (գլուխներ)
- 5) Եզրակացություն(ներ)
- 6) Օգտագործված գրականության ցանկ
- 7) Հավելված

Ինչպես արդեն նշել ենք, բուհական եռաստիճան համակարգում ուսանողները գրում են **ավարտական** երկու **աշխատանք**, առաջինը՝ բակալավրիատը ավարտելիս, իսկ երկրորդը՝ մագիստրատուրան: Դրանք, ըստ էության, նույն բնույթի աշխատանքներ են, գրվում են նույն սկզբունքով ու կառուցվածքով, տարբերվում են սոսկ ծավալով և հարցերի ընդգրկման չափով ու խորությամբ:

Ավարտական աշխատանքները նպատակ ունեն ստուգելու ուսանողի ոչ միայն գիտելիքները, այլև, որ շատ կարևոր է, նրա տրամաբանական, մտածական, դատողական, մասնագիտական կարողությունները, գիտական աշխատանք կատարելու ունակությունը: Դրանք լիովին հիմք են տալիս պատկերացում կազմելու ուսանողի՝ գիտական աշխատանք կատարելու կարողությունների մասին:

Ավարտական աշխատանքը ուսանողի մասնագիտական որակավորման տեսական ու գործնական պատրաստվածությունը հաստատող ուսումնասիրություն է: Այն պահանջում է ուշադիր լինել կառուցվածքի նկատմամբ. աշխատանքը բաժանել մասերի (եթե անհրաժեշտ է՝ գլուխների ու ենթագլուխների), վերնագրել դրանք, առանձնացնել ու ընդգծել խնդիրները, ընդհանրացումներն ու եզրահանգումները, որպեսզի ընթերցողին (ընդդիմախոսին) հստակ տեսանելի լինի, թե հեղինակը ինչ կյուր է քննարկում-բացատրում, ինչ է հավելում, որոնք են նրա փորձի արդյունքները, ինչ եզրակացությունների է հանգում:

Պետք է ուշադիր լինել նաև շարադրանքի նկատմամբ. լեզվական խճողումները, անհարկի բարդացումները, օտար տերմինների հաճախակի գործածումը, երկարաշունչ և վերացական դատողությունները դժվար ըմբռնելի են դարձնում ասելիքը, խանգարում են հետևելու մտքի զարգացման ընթացքին:

Անհրաժեշտ է խուսափել քննարկվող կյուրի և դրա շուրջ եղած կարծիքների հաճախակի և ծավալուն մեջբերումներից: Դրանք չպետք է լինեն ինքնանպատակ կամ ունենան էջեր «լցնելու» միտում: Եթե ավարտաճառ գրող ուսանողը ցանկանում է մեջբերել այլոց կարծիքները որպես իր փաստարկների հաստատում կամ լրացում, հարկավոր է մեջբերումը

ներկայացնել սեփական կարծիքից հետո, իսկ վիճարկելու դեպքում պետք է նախօրոք անդրադառնա այդ կարծիքներին:

Ավարտական աշխատանքի ծավալը, ըստ մասնագիտության կամ նյութի բարդության, կարող է տատանվել 40-50 (ավարտական աշխատանքը) և 60-80 (մագիստրոսական թեզը) էջի սահմաններում: Բնական ու տեխնիկական գիտությունների համար ծավալը սովորաբար ավելի փոքր է լինում:

Ավարտական աշխատանքի կառուցվածքը չի շեղվում որակավորման աշխատանքի կառուցվածքային տարրերից.

- 1) Անվանաթերթ
- 2) Բովանդակություն (ցանկ)
- 3) Ներածություն
- 4) Հիմնական մասի գլուխներ, ենթագլուխներ
- 5) Եզրակացություններ և առաջարկություններ
- 6) Օգտագործված գրականության ցանկ
- 7) Հավելված

Ուսումնական գործընթացում կարևոր նշանակություն ունեն ոչ միայն որակավորման աշխատանքները, այլև հաճախակի հանձնարարվող ռեֆերատները: **Ռեֆերատը** (լատիներեն *referro* բառից է, նշանակում է *հաղորդում, գեկուցում*) որևէ թեմայի ավելի խոր ուսումնասիրման, տարբեր կարծիքների համադրման արդյունք է, որի մեջ նկատելի են դառնում ուսանողի՝ գիտական աշխատանք կատարելու, ինքնուրույն եզրահանգումներ անելու կարողությունների սաղմերը: Ռեֆերատներն այն հիմքն են, որի շնորհիվ հետագայում զարգանում են գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակությունները:

Ռեֆերատներին ներկայացվող հիմնական պահանջն է՝ թեման ներկայացնել տեսակետների բազմազանությամբ և ընդգրկուն, տալ որոշ գիտական տեղեկություն, որն ուսանողներին կհարստացնի գիտելիքներով, կօժանդակի արհեստավարժ մասնագետ ձևավորելու և տվյալ գիտության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու գործին: Ռեֆերատի շնորհիվ ուսանողը խորությամբ է ուսումնասիրում առարկան, քանի որ հնարավորություն է ունենում՝ վերլուծելու տարբեր տեսակետներ, հավաքելու նոր փաստեր, համակարգելու և ընդհանրացնելու ծավալուն նյութը: Բացի այդ, սովորում է կազմել գիտական աշխատանքի պլան (կառուցվածքը, քննարկվող հարցերը), գրականությունից օգտվելու եղանակներ: Փաստորեն, ռեֆերատները նպաստում են ուսանողների ինքնուրույն մտածողության զարգացմանը:

Ռեֆերատի ծավալը, ըստ մասնագիտության կամ նյութի բարդության, կարող է տատանվել 10-15 էջի սահմաններում:

*

* *

Ի մի բերելով գիտահետազոտական աշխատանքների դասակարգման և տարատեսակների առանձնացման մասին ասվածը՝ կարող ենք փաստել, որ գիտահետազոտական աշխատանքների դասակարգման հիմնական սկզբունքները որքան էլ տրամաբանական են, այդուհանդերձ պայմանական են:

Այսպիսով, գիտական աշխատանքի կատարման հիմնական ձևը գիտական հետազոտությունն է, որի իրականացման եղանակները տարբեր են՝ ըստ հիմքի, նպատակի և ներկայացման ձևի: Դրանք բոլորն էլ շատ կարևոր են, քանի որ միասնաբար ծառայում են գիտական աշխատանքների կատարման նպատակին, այն է՝ գիտական նորոյթի հայտնագործում/գյուտ՝ գիտության զարգացման և գործնական կիրառման միջոցով կայուն զարգացման ապահովման համար:

Օգտագործված գրականություն

1. **Յովհաննիսյան Յ.**, Ինչպես գրել գիտական աշխատանք պատմությունից. մեթոդական հանձնարարականներ, Երևան, ԵՊՀ հրատ., 2014, 64 էջ:
2. **Алексеев П. В., Панин А. В.**, Философия, 4-е изд., Москва, изд. МГУ – “Проспект”, 2010, с. 370-421.
3. **Добреньков В. И., Осипова Н. Г.**, Методология и методы научной работы, 2-е изд., Москва, изд. «КДУ», 2012, 274 с.
4. **Кузин Ф. А.**, Дипломная работа. Методика написания, правила оформления и порядок защиты. Медочисские указания, Москва, изд. МПИ, 1990, 50 с.
5. **Лебедев С. А., Рубочкин В. А.**, История и философия науки, Москва, изд. МГУ, 2010, 200 с.
6. **van de Lagemaat R.**, Theory of Knowledge, 2nd ed., Cambridge: Cambridge University Press, 2011.
7. *Uncovering Our Earliest Ancestor: The Link*, BBC, UK, broadcast on 26 May 2009. Տե՛ս <http://www.youtube.com/watch?v=snuna3fLYAg> 17/06/14
8. “Q&A: Jørn Hurum on Ida, media hype and primate evolution” Տե՛ս <http://www.newscientist.com/article/dn17202-qampa-jrn-hurum-on-ida-media-hype-and-primate-evolution.html#.U6inRJSSxM8> 17/06/14

ԳԼՈՒԽ 2

ՓԱՍՏԱՐԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆԸ

2.1. ՓԱՍՏԱՐԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼԻՍ

Ջոն Միրշայմերի «Դարձ դեպի ապագա. անկայուն Եվրոպան Սառը պատերազմից հետո» հոդվածի օրինակով

Գիտական աշխատանք կատարելիս անհրաժեշտ է առաջնորդվել ինչպես տվյալ գիտության մեթոդներով, այնպես էլ ընդհանրական բնույթի մի շարք «չգրված» կանոններով, որոնցից մեկը, թերևս, հիշելն է, որ աշխատանքում արտահայտած յուրաքանչյուր դրույթ (թեզ), նույնիսկ միտք պետք է ամուր հիմք ունենա, պետք է երևա այդ մտքի ետևում հեղինակի ցուցաբերած համոզմունքը: Պետք է անպայման նկատի ունենալ, որ գիտական աշխատանքի հիմնական դրույթը կամ դրույթները պետք է տեսանելի լինեն աշխատանքի յուրաքանչյուր պարբերությունում, նույնիսկ՝ յուրաքանչյուր նախադասությունում: այլ կերպ ասած՝ այդ դրույթը կարմիր թելի պես պետք է ձգվի աշխատանքի սկզբից մինչև վերջ, յուրաքանչյուր պարբերությունն ու նախադասությունն կարողալիս ընթերցողը պետք է նկատի, թե ինչպես է հեղինակը պարբերությունն առ պարբերություն զարգացնում, ամբողջացնում իր դրույթը, մոտենում իր համոզմունքին: Այդ պատճառով անհրաժեշտ է նաև հիշել, որ գիտական աշխատանքն առաջին հերթին կատարվում է ընթերցողի համար, այսինքն՝ աշխատանք կատարելիս պետք է անընդհատ լինել ընթերցողի դերում: Միայն այդ ժամանակ աշխատանք կատարողը կարող է զգալ, թե որտեղ է հիմնական մտքից շեղվել, թե որտեղ է ավելորդ մտքեր կուտակել և ծանրաբեռնել աշխատանքը, կամ թե որտեղ է բաց թողել անհրաժեշտ վերլուծություն:

Վերնագիրը: Գիտական աշխատանք կատարելիս հարկավոր է ուշադրություն դարձնել ճիշտ և լավ վերնագիր ընտրելու վրա: Առաջին հերթին անհրաժեշտ է ճիշտ, հնարավորության դեպքում՝ լավ, հետաքրքրությունն առաջացնող վերնագիր ընտրել: Ճիշտ վերնագրի չափանիշը հետազոտության խնդիրը (պրոբլեմը) ճիշտ արտահայտելու ունակությունն է: վերնագիրը պետք է ցույց տա (հիմնա)խնդիր: Լավ վերնագրի չափանիշը,

հարկավ, ոչ միայն խնդիրը, այլև սեփական տեսակետը կամ տեսլականն այդ խնդրի առնչությամբ վերնագրի մի քանի բառերի մեջ զետեղելն է: Ջոն Միրշայմերի «Դարձ դեպի ապագա. անկայուն Եվրոպան Սառը պատերազմից հետո» հոդվածի վերնագրի երկրորդ հատվածն արտահայտում է և՛ խնդիրը, և՛ հեղինակի տեսակետը, տեսլականը: «Սառը պատերազմից հետո» բառերում տեսանելիորեն «թաթևված է» «ի՞նչ կլինի Եվրոպայում սառը պատերազմի ավարտից հետո» հարցը, իսկ «անկայուն Եվրոպան» հաջողությամբ ցույց է տալիս հեղինակի համոզմունքը, որ Սառը պատերազմի ավարտն ապակայունացնող հետևանքներ է ունենալու Եվրոպայի վրա: Ինչպես տեսնում ենք, վերնագրի առաջին հատվածը՝ «դարձ դեպի ապագա» բառակապակցությունը, կարծես թե լրիվական գեղում է, շեղվում է լուրջ գիտականության սկզբունքից, վիճահարույց ինչ-որ տարրեր է պարունակում իր մեջ: Առավել խորաթափանց լինելու պարագայում գուցե կարելի է զգալ, որ ընտրված վերնագրի նպատակն ավելի արտահայտորեն ցույց տալն է, որ Սառը պատերազմի ավարտից հետո Եվրոպայի ապագան նմանվելու է նրա նախասառըպատերազմյան անցյալին, ասել է թե, Եվրոպան առաջ կգնա դեպի իր անկայուն անցյալը: Նման բառակապակցություններն, ինչ խոսք, հետաքրքիր են դարձնում աշխատանքը: Այս ոճն Արևմուտքում, ի տարբերություն հետխորհրդային տարածքի գիտական մտքի, լայնորեն տարածված է: Բավական է հիշել միայն հանրահայտ մի քանի գործեր՝ Յենրի Զիսսինջերի «Արդյոք ԱՄՆ-ին պե՞տք է արտաքին քաղաքականություն», Ֆրենսիս Ֆուկույամայի «Պատմության ավա՞րտ», կամ մեր հայրենակից, թուրքահայ Դարոն Աջեմօղլուի՝ ոչ վաղ անցյալում լույս տեսած «Ինչո՞ւ են ազգերը ձախողվում» աշխատանքները, որոնք համաշխարհային քաղաքագիտական մտքում հեղաշրջիչ նշանակություն ունեցող գործեր են: Այսուհանդերձ, վերնագրի թեման ամփոփելով, նշենք, որ առավել կարևորը ճիշտ, խնդիր արտահայտող վերնագրի ընտրությունն է, և հատկապես սկսնակ կատարողի համար պարտադիր չէ մտածել «հետաքրքրաշարժ» վերնագրի մասին:

Խնդրի ներկայացումը: Խնդիրը ներկայացնելուց առաջ հակիրճ պետք է անդրադառնալ այդ խնդրի շուրջ իրողությանը. «իրավիճակն այսպիսին է...»: Իրավիճակի ներկայացմանը պետք է անմիջապես հետևի խնդիրը շոշափող հիմնական հարցադրումը, որը կախված է նրանից, թե կատարողը խնդրի որ կողմն է քննության առնում. «ի՞նչ է իրենից ներկայացնում այս իրավիճակը», կամ «ո՞րն է այս իրավիճակի ստեղծման պատճառը», կամ «ինչի՞ կհանգեցնի այս իրավիճակը» և այլն: Ընդ որում՝ անհրաժեշտ է ներկայացնել նաև թե՛ խնդրի շուրջ առկա իրավիճակի, թե՛ կա-

տարվող հիմնական հարցադրման պատասխանների վերաբերյալ տիրապետող գիտական/հասարակական տեսակետը կամ մրցակցող տեսակետները/բանավեճը: Այնուհետև, առանց մանրամասնելու անհրաժեշտ է տալ սեփական պատասխանն արված հարցադրման վերաբերյալ: Ընթերցողին խնդրի և հեղինակի տեսակետի ընկալմանը նախապատրաստելու համար կարևոր է մատնանշել աշխատանքի ընդհանրական հետազոտական առաքելությունը: Ո՞րն է աշխատանքի **նպատակը**, ի՞նչ է այն **գնահատում**, **աղձնորում**, **ցույց տալիս**... այս ընդգծված և այլ բառերը օգնում են հասկանալու աշխատանքի առաքելությունը՝ հետազոտական ի՞նչ նպատակ առաջադրելով ու դրան հասնելով է հեղինակը գալիս վերը արտահայտած իր տեսակետին: Նպատակին հասնելու եղանակները (որոնց համար հուշող բառեր կարող են լինել, օրինակ՝ **հետազոտել**, **վերլուծել**, **համեմատել**, **համադրել** և այլն) ևս հակիրճ ներկայացման կարիք ունեն. այս ամենով նախ՝ ընթերցողն առավել պատրաստ է լինում քննական մոտեցմամբ ընթերցել աշխատանքը, երկրորդ՝ աշխատանքի շարադրումն ավելի համակարգված է դառնում, և ուրվագծվում է հետազոտության ընդհանուր կառուցվածքը: Այսպես, Միքշայմերը, ներկայացնելով Սառը պատերազմի ավարտը բնութագրող հիմնական իրողությունները, որպես հիմնական հարցադրում է անում հետևյալը՝ «Սառը պատերազմի ավարտը Եվրոպայում խաղաղության ի՞նչ հեռանկար է նախանշում», որից հետո տալիս է այդ հարցադրման պատասխանի շուրջ գերակայող լավատեսական տեսակետը՝ «Սառը պատերազմի ավարտով վերացել են գլոբալ վտանգները», ինչպես նաև սեփական տեսակետը՝ «Սառը պատերազմի ավարտով անկայունությունները կաճեն Եվրոպայում»:

Փաստարկման ընդհանուր խնդիրը: Գիտական աշխատանք կատարելու անհրաժեշտ նախապայման է նախընտրած թեզի, վարկածի հիմքում հիմնավոր փաստարկներ ունենալը: Այդ փաստարկներն, իհարկե, ի հայտ են գալիս խնդրի երկարատև ու մանրակրկիտ, համբերատար ուսումնասիրության արդյունքում: Փաստարկները համոզիչ, հիմնավոր են, եթե բռնում են ինչպես տեսությունների, այնպես էլ պրակտիկայի, իրականության քննությունը: Չպետք է անտեսել ո՛չ տեսությունը, ո՛չ պրակտիկան: Տեսությունը պրոբլեմն ուսումնասիրելու ընդհանրական, օրինաչափ, դեդուկտիվ գործիքներ է առաջարկում, պրակտիկան հնարավորություն է տալիս ստուգել, փորձարկել տեսության գործիքները սովյալ խնդրի շուրջ, պրակտիկ օրինակներ է հրամցնում կատարողին՝ իր թեզը, վարկածը դրանցով ստուգելու համար: Ուստի գիտական աշխատանք կատարելիս հարկավոր է ինչ-որ տեղ առանձնացնել, զրանցել խնդրի վերաբերյալ առ-

կա գերակայող կամ մրցակցող տեսական դրույթները, ինչպես նաև սեփական տեսակետն ամրագրող համոզիչ իրողությունները: Ընդամին՝ աշխատանքի շարադրանքի փուլում՝ խնդիրը ներկայացնելուց անմիջապես հետո, Նախընտրելի է հակիրճ ներկայացնել բոլոր այն տեսական և պրակտիկ փաստարկները, որոնք ընկած են սեփական թեզի հիմքում. դրանով էլ ավելի համակարգված ու հասկանալի է դառնում աշխատանքը, և հակիրճ, քանի որ աշխատանքի մեծ մասը նվիրված է լինելու նշված փաստարկների մանրակրկիտ քննությանն ու այդ փաստարկների ճշմարտացիության ապացուցմանը: Սառը պատերազմից հետո Եվրոպայի կայունության վերաբերյալ հռեռեսական թեզի հիմքում Միրշայմերի հիմնական տեսական ու պրակտիկ փաստարկների շարքում կարելի է առանձնացնել հետևյալները. «պատերազմի և խաղաղության հարցը կախված է սուբյեկտների միջև ուժերի տեղաբաշխումից, խաղացողների թիվն ու ուժերի տեղաբաշխվածության բազմազանությունն ուղիղ համեմատական են կոնֆլիկտների բռնկման հնարավորությանը», «Սառը պատերազմի ժամանակվա համակարգը երկբևեռ էր (երկու հիմնական խաղացող) և կայուն էր», «Սառը պատերազմից հետո Եվրոպայում կհաստատվի բազմաբևեռ համակարգ, ինչը միտված կլինի կոնֆլիկտի հնարավորությանը»: Ինչպես տեսնում ենք, այս հիմնական փաստարկները որպես ճշմարտություն ընդունելը ճաշակի հարց է, դրանցում համոզվելու համար անհրաժեշտ են բազմաթիվ ու Նորանոր փաստարկներ, որոնք էլ ի հայտ են գալիս հեղինակի աշխատանքի բուն մասում: Միրշայմերն ավելին՝ Նախընտրում է ներկայացնել նաև իր բերած հիմնական փաստարկներին դեմ հանդես եկող՝ կրկին համընդհանուր ճանաչում գտած, ընդհանրական տեսական ու պրակտիկ հակափաստարկներ, օրինակ՝ կոնֆլիկտներ չեն լինի քանի որ. «Ժողովրդավարությունները խաղաղասեր են (Եվրոպայում գերազանցապես ժողովրդավար պետություններ են)», «միջազգային լիբերալ տնտեսակարգը (որը գնալով ընդլայնման միտումներ է ցուցաբերում) խաղաղարար է», «Եվրոպան լավ է հիշում անցյալի կոնֆլիկտների ողբերգական հետևանքները» և այլն: Նախընտրած փաստարկներին հակակշռող համազոր փաստարկներ ներկայացնելու մոտեցումը ոչ միայն ընդունելի, այլև խիստ օգտակար և խրախուսելի է. պետք է անպայման հաշվի առնել, որ աշխատանքում անհրաժեշտ է Նույն մանրակրկտությամբ, ինչ պաշտպանվում են սեփական փաստարկները, քննվեն և հերքվեն հակակշիռ փաստարկները:

Փաստարկման ընդհանուր ձևերը. տեսական-համադրության փաստարկում: Փաստարկի կշիռը մեծանում է, երբ այն կիրառվում է տե-

սական համադրույթի շրջանակում³: Իհարկե, փաստարկման համադրութային մոտեցումը ենթադրում է տվյալ մասնագիտության բնագավառում հետազոտողի առավել խորը ներգրավվածություն, առավել շատ կարդացվածություն, կատարած ուսումնասիրությունների առատություն: Այդուհանդերձ, ինչ-ինչ պայմանների ազդեցությամբ հետազոտողների մոտ ինքնաբերաբար է ձևավորվում համադրութային մոտեցումը: Խնդրի վերաբերյալ փաստարկելիս առավել օբյեկտիվ լինելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացնել ու արտահայտել, թե ինչ համադրութ է կիրառվում տվյալ հարցն ուսումնասիրելու ժամանակ: Գիտական աշխատանք կատարելիս էլ ավելի նախընտրելի է ներկայացնել, թե ինչպիսիք մեկից ավելի ինչ համադրութների շրջանակներում կարող է բնության առնվել: Այսպես, խաղաղության հիմքերի ուսումնասիրության ժամանակ կարելի է դիտարկել ինչպես միջազգային կառուցվածքի և ուժերի փոխդասավորության (այսինքն՝ գիտական այն մոտեցումը, որ խաղաղությունը գերազանցապես կախված է միջազգային համակարգի կառուցվածքից և ուժերի փոխդասավորությունից), այնպես էլ «խաղաղասեր դեմոկրատիաների» համադրութները (...որ միջազգային խաղաղության հիմնական որոշիչը ոչ թե ուժերի փոխդասավորության ձևն է, այլ տվյալ միջավայրում դեմոկրատական պետությունների թիվն ու ազդեցությունը): Ահա գիտական աշխատանքի շարադրման ժամանակ մեծապես ցանկալի է ներկայացնել հեղինակի նախընտրած տեսական համադրութը՝ դրա կողքին դնելով մյուսները՝ չնախընտրածները, սակայն՝ դրանց հանդեպ հիմնավոր վերաբերմունք արտահայտելու պայմանով: Այս ամենի իմաստն այն է, որ թե՛ հեղինակի, թե՛ ընթերցողի մոտ համոզմունք է ձևավորվում առ այն, որ տվյալ խնդիրը դիտարկելի է տվյալ համադրութի շրջանակում. սա միանգամայն դյուրացնում է հետազոտությունը, կրճատում է խնդիրների թիվը, կենտրոնացնում հետազոտական միտքը սահմանափակ թվով խնդիրների վրա: Պետք է նաև նշել, որ մինևույն համադրութի շրջանակում կան դրանից բխող և միմյանց հակադրվող ենթադրութներ, որոնց ընտրությունը ևս անհրա-

³ Համադրութը կամ հարացույցը գիտական որևէ հանրության կողմից ընդունված և օգտագործվող գիտական մեթոդների, համոզմունքների, նախընտրությունների մի համակարգ է, մտածողության կաղապար, որը գործադրվում է ընդհանրական բնույթի որևէ խնդրի ուսումնասիրման, դատողություններ անելու ժամանակ և որը որ ձևավորվում է գիտական որոշակի ավանդույթի շրջանակներում: Այսպես օրինակ՝ միջազգային հարաբերությունների տեսության մեջ համադրութ կարող է հանդիսանալ այն մոտեցումը, որ պետությունը հանդիսանում է ռացիոնալ և ունիտար դերակատար: Այս մոտեցումը դավանող գիտնականը որևիցե հարցում պետության վարքագիծը հակված կլինի բացատրել հենց ռացիոնալիզմի և ունիտարիզմի դիրքերից, միևնույն նրանք, ովքեր դեմ են այս մոտեցմանը, ռացիոնալիզմի և ունիտարիզմի մտակառուցյով պետության վարքագծի բացատրությունը չեն համարի որպես միակը և ճշմարտացի:

Ժեշտ պայման է հետազոտությունը ճիշտ իրականացնելու համար: Խաղաղության հարցը միջազգային համակարգի կառուցվածքի համադրույթի շրջանակում քննարկելուց զատ Միրշայմերը քննության է առնում նաև նույնը այդ համադրույթի ենթադրույթների շրջանակում: միջազգային համակարգի կառուցվածքի ո՞ր ձևն է առավել խաղաղարար՝ **միաբնեռությունը, երկբնեռությունը, թե՞ բազմաբնեռությունը:** Այս երեքը կառուցվածքային համադրույթների ենթադրույթներն են:

Փաստարկման ընդհանուր ձևերը. տեսական համադրության և ենթադրության փաստարկումը: Հակադրվող ենթադրույթները ներկայացնելուց հետո անհրաժեշտ է տեսական մոտեցումներով, իսկ այնուհետև պրակտիկ օրինակներով զատել, ի ցույց դնել ճշմարտացի, նախընտրելի, տեսական օրինաչափություններին ու օբյեկտիվ իրականությանն առավել համապատասխանող ենթադրույթները: Երկբնեռության ենթադրույթի իր նախընտրությունը Միրշայմերը փաստարկում է հետևյալ տեսական դատողություններով. երկբնեռության պարագայում հակամարտող մեկ զույգ կա, ուստի քչանում է կոնֆլիկտի հավանականությունը, առկա երկու բնեռները ուժեղ են մնացած բոլոր ոչ-բնեռներից, ինչը նրանց միմյանց վրա կենտրոնանալու և այլ վտանգներ չսպասելու ու միմյանց հավասարակշռելու հնարավորություն է տալիս, միմյանց հեշտ են զսպում և այլն: Ինչո՞ւ բազմաբնեռությունը չի ապահովում խաղաղության հեռանկարը, որովհետև առավել թույլ ուժերը ճկուն են հատկապես դաշինքների ընտրության հարցում, դաշինքներն ու հակադաշինքներն արագ են ստեղծվում և փլուզվում, փոքրամասշտաբ պատերազմները կարող են մեծանալ, զսպման մեխանիզմները արդյունավետ չեն, քանի որ անհավասարակշիռ իրավիճակները շատ են լինում: Ենթադրույթները տեսությամբ «կոմպենսելուց» զատ անհրաժեշտ է նաև փորձարկել դրանք պրակտիկայի, պատմության կամ արդիականության շրջանակներում: Այս առումով Միրշայմերի համար բավական դյուրին էր պատմական օրինակներով ցույց տալու երկբնեռության առավելությունները սառըպատերազմյան Եվրոպայում և բազմաբնեռության հետևանքների օրինակները նախասառըպատերազմյան Եվրոպայում: Պետք է հիշել նաև, որ չի կարելի միայն մեկ ենթադրույթով բավարարվել: Եթե խնդրի էությունը կախված է մեկից ավելի փոփոխականներից, ապա բոլոր հայտնի փոփոխականները պետք է հատ առ հատ քննության ենթարկվեն (Միրշայմերի աշխատանքի պարագայում որպես մրցակցող ենթադրույթներ քննության են առնվել միջուկային և ոչ միջուկային ուժերի, ուժերի փոխդասավորության ենթադրույթները կայունության հեռանկարի համատեքստում):

Փաստարկումն իրականությամբ: Փաստարկման վերը նշված ձևերը հիմնականում վերաբերում էին հետազոտական գործիքների ընտրությանը: Այդ ընտրությունը հնարավորություն է տալիս ճիշտ գնահատելու հետազոտվող խնդրի շուրջ առկա իրականությունը: Այժմ շատ ավելի դյուրին խնդիր է հետազոտական մյուս մեթոդներով (համակարգային, համեմատական, դեպքային վերլուծության և այլն) փաստարկել առաջադրված հարցադրման պատասխանները, ապացուցել առաջ քաշված թեզը: Այսպես, Միրշայմերը ցույց էր տալիս, որ այն ժամանակվա (հողվածը գրելու ժամանակվա՝ 1990-ական թթ. սկիզբ) միտումները Եվրոպան տանելու էին դեպի բազմաբևեռություն, որտեղ ավելանալու էին միջուկային ուժերը, ուժային փոխդասավորություններն առավել անհամաչափ էին դառնալու, և խորանալու էր անհավասարակշռությունը: Երկուսուկես տասնամյակ անց հետադարձ հայացք նետելով Միրշայմերի փաստարկներին՝ կարող ենք եզրակացնել, որ նրա որոշ ենթադրույթներ կորցրել են իրենց արդիականությունը, սակայն նրա աշխատանքը⁴ օգտակար է ծանրակշիռ և արժանահավատ կերպով փաստարկել սովորելու համար:

Որպես ամփոփում՝ պետք է վերջում ոչ միայն ամբողջական տալ հիմնական եզրահանգումը, այլ նաև շատ հակիրճ ցույց տալ, թե ինչ հիմնական փաստարկներով, համադրույթներով ու ենթադրույթներով է հեղինակը հանգել իր եզրահանգմանը:

⁴ Տե՛ս **Mearsheimer John J.**, Back to the Future: Instability in Europe after the Cold War, // Foreign Policy Agenda: The New Shape of World Politics: Contending Paradigms in International Relations, Foreign Policy, W.W. Norton, New-York-London, 1997, pp. 101-157:

2.2. ՀՂՈՒՄՆԵՐԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

Հղումները գիտական աշխատանքների անբաժան մասն են և աշխատանքի գիտականության կարևոր (թեև երբեմն ոչ որոշիչ) ցուցիչներից մեկը: Որպես կանոն, մենք հղում կատարում ենք ամեն անգամ, երբ աշխատանքում ներկայացնում ենք որևէ աղբյուրից վերցված տեղեկությունը, ինչ-որ մեկի հայացքները կամ էլ երբ կապ ենք ստեղծում մեր գրածի և դրան վերաբերող աղյուսակի, գծապատկերի միջև: Այդուամենայնիվ, հատկապես սկսնակ հետազոտողների մոտ երբեմն առաջ են գալիս մի շարք հարցեր, ինչպես օրինակ՝ ե՞րբ է անհրաժեշտ հղում կատարել, ի՞նչ աղբյուրներ կարելի է օգտագործել և, հետևաբար, դրանց հղում կատարել, հղում կատարելու ո՞ր ձևն է նախընտրելի, աղբյուրների մատենագիտական ո՞ր տվյալներն ու դրանք ինչպե՞ս է պետք ներկայացնել հղման մեջ և այլն, ավելի կոնկրետ՝ ինչո՞ւ, ինչի՞ն, ե՞րբ և ինչպե՞ս հղում կատարել: Այս հարցերին էլ կանդիդատական ստորև և գործնական օրինակներով ցույց կտանք դրանց պատասխանները:

1. Ինչո՞ւ հղում կատարել: Հղումների էությունը և նշանակությունը

Սահմանում: Հղումն օգտագործվող տեղեկության, տվյալի (փաստական, վիճակագրական տվյալներ, այլ հեղինակի միտք և այլն) աղբյուրի հիշատակումն է (*մատենագիտական կամ արտաքին հղում*) կամ աշխատանքի տարբեր մասերը (գլուխ, ենթագլուխ, նկար, աղյուսակ, հավելված և այլն) միմյանց կապող գրառումը (*ներքին հղում*):

Մեզ հետաքրքրողն այստեղ արտաքին կամ մատենագիտական հղումներն են: ***Արտաքին հղումը*** պահանջում է օգտագործվող աղբյուրի մատենագիտական տվյալների ճշգրիտ ներկայացում: *Աշխատանքում օգտագործվող տվյալի, տեղեկության աղբյուրը չհիշատակելը համարվում է գրագողություն* (տե՛ս հաջորդ բաժնում) կամ հեղինակային իրավունքների խախտում, իսկ աղբյուրի մատենագիտական տվյալները թերի ներկայացնելը՝ կոպիտ սխալ: Այստեղից էլ բխում է **հղում կատարելու «ոսկե կանոնը»՝ հետաքրքրված ընթերցողին տալ բավարար տեղեկություն (մատենագիտական տվյալներ), որպեսզի նա կարողանա հետաուլթյամբ և արագորեն գտնել օգտագործված աղբյուրը [1, p. 113]:**

Իսկ ո՞րն է արտաքին հղումների իմաստը, նշանակությունը:

1. Օգտագործված աղբյուրին հղում կատարելն ակադեմիական գրագիտության հիմնարար պահանջ է, հակառակ դեպքում գործ կունենանք գրագողության հետ:
2. Հղումն ապահովում է օգտագործված տվյալների ստուգելիությունը, այսինքն՝ հղման մեջ տրված աղբյուրի միջոցով դյուրությամբ կարելի է ստուգել մեջբերվածի հավաստիությունը: Դա նաև ենթադրում է աղբյուրի մատենագիտական տվյալների լիարժեք ներկայացում՝ օգտագործված տվյալների սկզբնաղբյուրը հեշտությամբ գտնելու նպատակով:
3. Հղումն օգտագործված աղբյուրների հեղինակների կատարած աշխատանքի հանդեպ հարգանքի նշան է: Ըստ որում, վերջինի համար անհրաժեշտ է և՛ վերլուծության տեքստում հիշատակել օգտագործված աղբյուրի հեղինակին, և՛ համապատասխան ձևով հղում կատարել օգտագործված աղբյուրին:
4. Հղումը վկայում է, որ ներկայացված վերլուծությունը հիմնավորված է այլ հեղինակների կողմից նախկինում կատարված ուսումնասիրություններով: Դա խոսում է այն մասին, որ ձեր աշխատանքը գիտության տվյալ ճյուղի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների մի մասն է և, միաժամանակ, ներդրում այդ ճյուղի զարգացման գործում: Հարկ է, սակայն, հիշել նաև, որ հղումներն ընդամենը պետք է նպաստեն սեփական կարծիքի, գաղափարի հիմնավորմանը, այլ ոչ թե փոխարինեն ձեր կարծիքին:
5. Հղումները վկայում են ուսումնասիրության ընդգրկունության և մատենագիտական բազայի բնույթի մասին: Սա խոսում է այն մասին, որ դուք քաջածանոթ եք ձեր աշխատանքում օգտագործված աղբյուրներին և պատրաստ եք այդ թեմայով ծավալել գիտական բանավեճ:
6. Ի վերջո, հղում անելը վկայում է, որ ուսանողը տիրապետում է ակադեմիական գրագիտության այդ տեխնիկային:

1.1. Հղումներին ներկայացվող հիմնական պահանջները

Ուսումնա(գիտա)կան աշխատանքներում օգտագործվող աղբյուրներին ներկայացվող հիմնական պահանջները չորսն են՝ հղումների *բանակական և որակական բնութագրերը*, ինչպես նաև հղումների (աղբյուրների) *ստուգելիությունն ու վստահելիությունը*:

- Աշխատանքում մատենագիտական հղումների ***բանակը***, որպես կանոն, խոսում է քննվող հարցի տեսական մշակվածության մասշտաբների մասին: Սակայն սեփական աշխատանքը զանազան աղբյուրներ-

րին հղումներով ու մեջբերումներով հարստացնելուն զուգահեռ, անհրաժեշտ է հիշել, որ ***քննարկվող հարցին դուք պարտավոր եք տալ նաև սեփական գնահատականը:***

- Յարկ է հիշել նաև աղբյուրների ***որակի*** մասին և հղում կատարել միայն համեմատաբար նոր հրապարակված, հեղինակավոր ու թեմատիկ աղբյուրներին՝ հնարավորինս խուսափելով դասագրքերի և տեղեկատվական նյութերի, հանրամատչելի աղբյուրների օգտագործումից: Պետք է նաև հիշել, որ աշխատանքի որակի մասին է խոսում նաև դրանում տվյալ թեմայով հիմնարար կամ դասական համարվող աղբյուրների օգտագործումը՝ հատկապես քննարկվող հիմնախնդրի տեսական մշակվածությունը և, միաժամանակ, ուսանողի՝ դրանց հետ ծանոթ լինելը ցույց տալու համար:
- Ինչպես վերևում արդեն նշվեց, «ոսկե կանոնը» պահանջում է, որպեսզի հղումն օգտագործված աղբյուրին պարունակի բավարար չափով (թվով, մանրամասնությամբ) մատենագիտական տվյալներ, որոնք ընթերցողին հնարավորություն կտան՝ հեշտությամբ և արագ գտնելու օգտագործված աղբյուրն ու ծանոթանալու այն հատվածին, որին դուք հղում եք կատարում ձեր աշխատանքում: Սա ապահովում է ձեր օգտագործած տվյալների ***ստուգելիությունը:***
- Օգտագործվող աղբյուրները պետք է լինեն նաև ***վստահելի (հուսալի)***, այսինքն՝ գիտության տվյալ բնագավառում ընդունված և ճանաչված: Վստահելի և ոչ հուսալի աղբյուրները զանազաները բավական դժվար է, հատկապես՝ սկսնակ հետազոտողների համար: Վստահելիության կարևոր, բայց ոչ որոշիչ ցուցիչներ կարող են լինել աղբյուրի վերնագիրը, հեղինակի և հրատարակչության մասին տեղեկությունները, շարադրանքի ոճը և ձևավորումը (հիմնականում գրքերի դեպքում), ինչպես նաև հրապարակող ամսագրի հեղինակավորությունը (Impact factor), հեղինակին ու նրա հոդված(ներ)ին հղում անելու գործակիցը: Ամեն դեպքում, գոնե սկզբնական շրջանում աղբյուրների ընտրության հարցում ուսանողը պետք է խորհրդակցի իր դասախոսի կամ գիտական ղեկավարի հետ:

2. Ե՞րբ և ինչի՞ն (է անհրաժեշտ) հղում կատարել

Աղբյուրին ***հղում անհրաժեշտ է կատարել*** ամեն անգամ, երբ դուք օգտագործում եք մտքեր, գաղափարներ ու այլ տվյալներ հետևյալ աղբյուրներից.

- Գրքերից, գրքուկներից և հոդվածներից,

- Թերթերից և ամսագրերից;
- Տեսաֆիլմերից, հեռուստա- և ռադիոհաղորդումներից,
- Համացանցային կայքերից և էլեկտրոնային պաշարներից,
- (Էլեկտրոնային) նամակներից, օնլայն քննարկումների ֆորումներից;
- Հարցազրույցներից;
- Դասախոսություններից *(եթե ձեր դասախոսը կամ գիտական ղեկավարը դա անհրաժեշտ է համարում)*:

Բնականաբար, անիմաստ է հղում կատարել այն ամենին, ինչն այլ մարդիկ չեն կարող կարդալ, տեսնել կամ լսել՝ ձեր մեջբերած տվյալներն ստուգելու համար: Այդպիսի դեպքերում որոշ մասնագետներ խորհուրդ են տալիս վերլուծության տեքստում պարզապես հիշատակել այլ անձանց հետ ունեցած հեռախոսազրույցի կամ նամակագրության մասին՝ միաժամանակ նկատելով, որ այսօր գոյություն ունեն այդպիսի անհատական հաղորդակցություններն արձանագրելու տեխնիկական միջոցներ **[1, pp. 15-16]**: Այդուհանդերձ, մենք խորհուրդ ենք տալիս վերլուծության մեջ օգտագործել և հիշատակել միմիայն այն աղբյուրները, որոնք ստուգելի են: Իսկ անհատական հաղորդակցությունները (օրինակ՝ նամակագրությունը, հարցազրույցները) կարելի է օգտագործել՝ աշխատանքի առանձին մասում (որպես կանոն, «Հավելվածում») տալով դրանց սղագրությունը և/կամ համառոտագրությունը՝ նշելով դրանց բավարար մատենագիտական տվյալներ՝ առավելագույն ստուգելիություն ապահովելու համար:

Կան նաև հատուկ դեպքեր, երբ որևէ աղբյուրին **հղում անել չի պահանջվում**. Դրանք են.

- Երբ գրում եք ձեր դիտարկման կամ փորձարկման արդյունքների մասին (օրինակ՝ դաշտային հետազոտության զեկույց):
- Երբ գրում եք ձեր փորձի և տպավորությունների մասին:
- Երբ ներկայացնում եք ձեր սեփական մտքերը, մեկնաբանություններն ու եզրակացությունները:
- Երբ օգտագործում եք «հանրահայտ տեղեկություններ» *(փաստեր, որոնք կարելի է գտնել բազմաթիվ տեղերում և հայտնի են բազմաթիվ մարդկանց)* կամ ժողովրդական բանահյուսություն:
- Երբ օգտագործում եք տվյալ մասնագիտության մեջ համընդհանուր ճանաչում գտած փաստեր կամ տեղեկություններ *(անհրաժեշտ է խորհրդակցել գիտական ղեկավարի հետ)*:

Իսկ որո՞նք են վերը նշված ցուցակի վերջին երկու դեպքերը, որոնք հայտնի են **«հանրահայտ փաստեր»** ընդհանուր անվամբ:

Հարվարդի համալսարանում ընդունված բնորոշմամբ, «հանրահայտ փաստ» կամ ընդհանուր գիտելիք է այն տեղեկությունը, որը, որպես կանոն, հայտնի է կրթված ցանկացած անձի: Այդպիսին կարող են լինել հանրահայտ իրադարձությունները, տարեթվերը, արտահայտությունները, երբեմն՝ նաև գաղափարները: Սակայն կոնկրետ անձի ստեղծագործական գործունեության արդյունք հանդիսացող փաստական տվյալները կամ գաղափարները չեն համարվում «հանրահայտ փաստ», հետևաբար, այս դեպքում հղումն աղբյուրին պարտադիր է [2]: Մեկ այլ բնորոշմամբ, դա մի «տեղեկություն է, որին ենթադրաբար ծանոթ են կոնկրետ «համայնքի»՝ հաստատության, քաղաքի, վարչական շրջանի, պետության, ռասայի, էթնիկ խմբի, գիտաճյուղի, մասնագիտական ընկերակցության կամ այլ նմանատիպ շրջանակների ներկայացուցիչները» [1, p. 22]:

Գոյությունի ունի այդպիսի «հանրահայտ տեղեկությունների» երկու տեսակ՝ *համընդհանուր* և *Նեդ մասնագիտական*: *Համընդհանուր* հանրահայտ են այն տեղեկությունները, որոնք ազատորեն շրջանառվում են հանրության մեջ, քաջածանոթ են հասարակության մեծ մասին, հասանելի են տեղեկագրքերում, հանրամատչելի հանրագիտարաններում, և, որպես կանոն, համարվում են անվիճելի իրողություններ: Այդպիսի հանրահայտ փաստեր են, օրինակ, ջրի մոլեկուլի կառուցվածքը՝ H_2O , այն, որ «Սամվել» վեպի հեղինակը Րաֆֆին է, որ ՀՀ Անկախության հռչակագիրն ընդունվել է 1990 թ. օգոստոսի 23-ին, իսկ Անկախության օրը նշվում է սեպտեմբերի 21-ին: Հանրահայտ տեղեկությունների այս տեսակին են պատկանում նաև ժողովրդական բանահյուսության նմուշները, հայտնի անձանց «թևավոր խոսքերը»:

Նեդ մասնագիտական շրջանակներում հանրահայտ փաստերն առանձնահատուկ են նրանով, որ դրանց քաջածանոթ են միայն մասնագիտական տվյալ խմբի անդամները: Օրինակ, այն, որ Արիստոտելը ժողովրդավարությունը չէր համարում կառավարման լավագույն ձև, որ Իրանն ու Վատիկանը կրոնապետություններ են, հանրահայտ փաստ է քաղաքագիտություն ուսումնասիրողների, բայց ոչ անպայման կենսաբանություն ուսումնասիրողների համար: Կամ էլ՝ եթե ջրի մոլեկուլի կառուցվածքը համընդհանուր հանրահայտ փաստ է, ապա ջրի հատկանիշների իմացությունը համընդհանուր է միայն *Նեդ մասնագիտական*, օրինակ՝ քիմիայի ոլորտում:

Սակայն, ամեն դեպքում, պետք է հաշվի առնել, որ եթե քննարկումը չի սահմանափակվում միայն այդ հանրահայտ փաստերի արձանագրմամբ, այլ, օրինակ, ներառում է նաև կարծիքների, մոտեցումների, մասնագիտա-

կան գնահատականների ներկայացում, ապա վերջիններիս աղբյուրների հիշատակումը պարտադիր է:

Անշուշտ, գործանականում, հատկապես սկսնակ հետազոտողների համար երբեմն դժվար է լինում որոշել՝ տվյալը «հանրահայտ փաստ» է, թե՞ ոչ: Այսպիսի դեպքերում նպատակահարմար է հղում անել որևէ աղբյուրի. եթե պարզվի, որ դա հանրահայտ փաստերի շարքից է, ձեր աշխատանքի գրախոսն ընդամենը կնշի, որ դրա համար որևէ աղբյուր հիշատակելու կարիք չկար: Սա, բնականաբար, ավելի լավ է, քան մեղադրվելը գրագողության մեջ: Այսպիսի իրավիճակներում գիտական ղեկավարի կամ դասախոսի օգնությանը դիմելը լավագույն տարբերակն է:

2.1 Ինչպե՞ս ընտրել աղբյուրները

Որակյալ հետազոտությունն իրականացնելու համար աղբյուրների ընտրությունն ունի առանցքային նշանակություն: Այսօր համացանցային տիրույթի և հրատարակչական գործի զարգացումը մի կողմից հետազոտողին առաջարկում է թեմատիկ հրապարակումների առատություն, սակայն մյուս կողմից ի հայտ է գալիս այդ առատությունից պետքականը «ֆիլտրելու» խնդիր: Անշուշտ, կախված մասնագիտությունից, այդ «ֆիլտրը» կլինի տարբեր, և այդ հարցում դժվար է որևէ համընդհանուր չափորոշիչ առանձնացնել: Ավելին, այն հրապարակումը, որը մեկի համար (իր հետազոտական թեմայից ելնելով) կլինի անօգտակար «տեղեկատվական աղբ», մի ուրիշի համար կարող է լինել հակառակը՝ ուսումնասիրության հիմնական պաշար: Օրինակ՝ ներպետական քաղաքական մրցապայքարում կամ միջպետական հակամարտություններում կիրառվող քարոզչությունն ուսումնասիրողի համար խիստ արժեքավոր կլինեն մրցակցող/հակամարտող կողմերի այն հրապարակումները, որոնք մեկ այլ թեմա ուսումնասիրողի համար կորակվեն «քարոզչական աղբ»: Այս պայմաններում սկսնակ հետազոտողի համար օգտակար կլինի հետևել երեք խորհուրդների: Նախ, այս հարցերում առանցքային դերակատարում ունի գիտական ղեկավարը. նա պետք է, մի կողմից, ինքն առաջարկի նախնական, ուղղորդիչ հրապարակումներ, մյուս կողմից, օգնի ուսանողին՝ ընտրել և օգտագործել համապատասխան հրապարակումներ: Երկրորդ, բնականաբար, ուսանողն ինքը ևս պետք է փնտրի թեմատիկ հրապարակումներ: Իսկ հրապարակումների առատության մեջ ճիշտ ընտրություն կատարելու հարցում օգտակար կլինեն վերևում աղբյուրների վստահելիության (հուսալիության) համար ուղղորդիչ ցուցանիշները: Երրորդ, ժողոված նյութերի ընթերցման ժամանակ թեմատիկ հրապարակումներն իրենք ևս

կիռւշէն ուսանողին՝ ինչ գրականություն փնտրել: Օրինակ՝ որևէ հրապարակման մեջ ուսանողը կարող է հանդիպել մեկ այլ հրապարակման մասին հիշատակման, որն իրենից կներկայացնի խիստ արժեքավոր նյութ: Ընդհանուր առմամբ, կարելի է օգտվել աղբյուրների ընտրության հետևյալ ընդհանրական չափորոշիչներից [1, p. 17].

- *Թեմատիկ համապատասխանությունը* – որքանո՞վ է տվյալ հրապարակումն արդիական և կիրառելի ընտրված թեմայի համար, որքանո՞վ է հեղինակի մոտեցումը հավասարակշռված և օբյեկտիվ, անկողմնակալ քննարկվող հարցերի նկատմամբ,
- *Ժամանակային համապատասխանությունը* – ե՞րբ է հրապարակվել տվյալ նյութը, դեռ կիրառելի՞ են դրանում արտացոլված գաղափարներն ու մոտեցումները, վերանայե՞լ է տվյալ հեղինակն իր մոտեցումները հետագայում՝ ավելի նոր հրապարակման մեջ (այս դեպքում անհրաժեշտ է կիրառել նոր հրապարակումը),
- *Հրապարակման հանրահայտությունը* – արդյո՞ք տվյալ աղբյուրը բավարար չափով հեղինակավոր է՝ այն հետազոտության մեջ ներառելու համար (հեղինակավոր հրատարակչություն, հետազոտական կենտրոն կամ գրախոսվող ամսագիր), արդյո՞ք այլ հեղինակներ անդրադարձել են տվյալ հրապարակմանը, որքանո՞վ է պետքական, օգտակար տվյալ հրապարակումն ընտրված հետազոտական թեմայի համար,
- *Թեմատիկ ընդգրկունությունը* – որքա՞ն համընդհանուր կամ ընդգրկուն են հրապարակման մեջ ներկայացված գաղափարներն ու մոտեցումները (հնարավոր է՝ ընտրված թեման ենթադրում է բավական նեղ ուղղվածության հրապարակումներ մասնավոր դեպքերի վերաբերյալ):

2.2 Աղբյուրների տիպաբանությունը

Աղբյուրները տիպաբանվում են տարբեր սկզբունքներով: Օրինակ, ըստ *տեղեկության աղբյուրի բնույթի*, դրանք լինում են

- *առաջնային* – երբ տեղեկությունն ստացվում է իրադարձություններում անմիջականորեն ներգրավված անձանցից (հարցազրույցներ, հասարակական կարծիքի ուսումնասիրություններ, նորմատիվ-իրավական ակտեր և այլն) կամ տեսությունը, սահմանումը, գաղափարն այն տեսքով, ձևով, ինչպես դրանց հեղինակն ինքն անձամբ՝ «առաջին ձեռքից» է ներկայացնում (ընտրի՞նակը): Այս տեսակի աղբյուրները օգ-

տագործվում են հետազոտության առանցքային դրույթների, մեջբերումների, փաստարկների ներկայացման ժամանակ:

- *Երկրորդային* – երբ երևույթի, իրադարձության մասին տեղեկությունն ստացվում է «Երկրորդ ձեռքից»՝ միջնորդավորված, այսինքն՝ բնօրինակի՝ այլ հեղինակների կողմից մեկնաբանությունների, վերլուծությունների տեսքով: Սրանք կարելի է կիրառել ավելի պակաս նշանակալի փաստական տվյալների, օրինակների համար:

Ըստ տեղեկության աղբյուրի տեսակի, տարբերում են տպագիր, տեսա- և ձայնային, էլեկտրոնային/թվային աղբյուրները, նկարները և ֆոտոպատկերները: Ըստ տեղեկության աղբյուրի տիպի, տարբերում են հետևյալ աղբյուրները.

- Գիրք, գրքույկ և հոդվածների ժողովածու,
- Ամսագիր (ամսագրային հոդված),
- Թերթ (թերթային հոդված),
- Անհատական/մասնավոր հաղորդակցություն (հարցազրույց, նամակ),
- Իրավական ակտ (օրենք, որոշում, պայմանագիր),
- Վիճակագրություն,
- Չիրատարակված նյութ (թեզիս, ձեռագիր, հոդված),
- Ռադիո- և հեռուստահեռարձակումներ և այլն:

3. Ինչպե՞ս հղում անել

Ոչ միայն ողջ աշխարհում, այլև ոչ մի երկրում չկա հղումների միասնական (պարտադիր) ոճ: Որպես կանոն, գիտական ընկերությունները, բուհերը, հրատարակչությունները, ամսագրերն իրենք են որոշում իրենց համար նախընտրելի ոճը: Ուստի քիչ չեն դեպքերը, երբ միևնույն բուհի տարբեր մասնագիտական ստորաբաժանումներում (ֆակուլտետ, բաժին) կիրառվում են հղումների տարբեր ոճեր: Հղումների տարբեր ոճերի կարելի է հանդիպել նաև միևնույն մասնագիտությանը վերաբերող տարբեր հրատարակումներում, այդ թվում՝ տարբեր երկրներում հրատարակված: Ընդհանուր առմամբ, ակադեմիական միջավայրում կիրառվում են հղումների 10-ից ավելի ձևեր (ՀՀ-ում լայն տարածում ունեցող և ավանդական համարվող «խորհրդային» ձևը դրանցից մեկն է), որոնք դասակարգվում են 3 հիմնական ոճային խմբերի մեջ՝ *Ներտեքստային*, *շարունակվող համարակալմամբ* և *կրկնվող համարակալմամբ*:

Իսկ ինչպե՞ս կողմնորոշվել հղումների ոճերի այս բազմակարծության (պլյուրալիստական) միջավայրում: Հեղինակություններին տուրք տալ, այսինքն՝ ցանկանալ կիրառել այն ոճը, որը կիրառվում է հեղինակավոր

բուհերում կամ գիտական ընկերակցություններում, անիմաստ է, քանի որ նրանք կիրառում են տարբեր ոճեր: Այդ դեպքում ինչպե՞ս վարվել: Նախ, ինչպես նշվեց, որպես կանոն, բուհական մասնագիտական ստորաբաժանումները, գիտական ընկերություններն ու ամսագրերն իրենք են որոշում իրենց համար նախընտրելի ոճը և պահանջում հեղինակներից՝ իրենց ներկայացված աշխատանքներում կիրառել հղումների այդ ոճը: Երկրորդ, դա պատճառ է դարձել, որ յուրաքանչյուր մասնագիտության համար ձևավորվեն «նախընտրելի» ոճեր: Այսինքն, այս կամ այն գիտաճյուղում հղումների այս կամ այն ոճն ավելի տարածված է, քան մյուս ոճերը: Երրորդ, եթե չկա որևէ ոճային սահմանափակում, հեղինակն ինքը պետք է որոշի՝ որ ոճը կիրառել: Վերջին դեպքում անհրաժեշտ է իմանալ ոչ միայն տվյալ ոճի դեպքում աղբյուրների մատենագիտական տվյալների ներկայացման և աղբյուրների ցանկի կառուցման կարգը, այլ նաև պետք է հաշվի առնել այդ ոճի կիրառման առավելություններն ու թերությունները (դա վերաբերում է բոլոր ոճերին):

Ստորև կներկայացնենք այս երեք հիմնական ոճային խմբերն իրենց առանձնահատկություններով, համեմատական առավելություններով ու թերություններով:

3.1 Հղումների հիմնական ոճերը

Ներտեքստային ոճ: Բուն տեքստի մեջ տրվում են հեղինակի կամ կազմակերպության անունը՝ ուղղակիորեն տեքստում կամ փակագծերի մեջ, հրատարակման տարեթիվը և օգտագործված հատվածի էջը:

Օգտագործված աղբյուրներն այբբենական կարգով ներկայացվում են հետազոտության տեքստի (հոդվածի, աշխատանքի գլխի կամ ենթագլխի) վերջում:

Այս ոճի *առավելություններից* են՝ շատ հարմար է տպագիր և առնվազն մեկ հեղինակ ունեցող հրատարակումների դեպքում, մասնավոր քննարկման ժամանակագրական զարգացումը հետևելու համար, հեշտ է վարժվելն ու օգտագործելը, տարածված է ու ճանաչելի, չկա հղման համար հայացքը բուն տեքստից կտրելու և տողատակը կամ աշխատանքի վերջում տրված աղբյուրների ցանկը նայելու կարիք: *Թերություններից* են՝ անհարմար է անհեղինակ կամ հրատարակման տարեթիվ չունեցող, համացանցային հրատարակումներին, հեռուստա- և ռադիոհաղորդումներին, տեսա- և ձայնային նյութերին, երկրորդային աղբյուրներին հղում անելու համար:

Ներտեսչության ոճի տարատեսակներն են Հարվարդի համալսարանի (Harvard style), Ամերիկյան հոգեբանական ընկերակցության (APA style), Ժամանակակից լեզուների ընկերակցության (MLA style), Ժամանակակից հասարակագիտական հետազոտությունների ընկերակցության (MHRA style), Չիկագոյի համալսարանի Տուրաբյան (Turabian style), Գիտական խմբագիրների խորհրդի (CSE style): Ենթարկվելով ոճային խմբի ընդհանուր կանոններին՝ այս տարատեսակները միմյանցից փոքր-ինչ տարբերվում են:

Շարունակական համարակալում: Սա ՀՀ-ում առավել տարածված հղման ոճն է: Այս դեպքում բուն տեքստում կիրառվում է վերտողային համարակալում, որը կապակցված է տողատակային կամ տեքստի վերջում տրվող աղբյուրագիտական գրառման հետ: Ըստ որում, համարակալումն իրականացվում է շարունակականության սկզբունքով, երբ ողջ տեքստում հղումների համարակալումը շարունակվում է (¹, ², ³, ⁴ ...), այլ ոչ թե ամեն էջում սկսում նորից:

Օգտագործված աղբյուրների ցուցակը տրվում է հետազոտության տեքստի (հոդվածի, աշխատանքի գլխի կամ ենթագլխի) վերջում:

Այս ոճի *առավելություններից* են՝ ավանդությանին է, հատկապես՝ տողատակային տարատեսակը, հարմար է բոլոր բնույթի, տեսակի, տիպի աղբյուրներին հղում կատարելու համար: *Թերություններից* են՝ տեխնիկապես մի փոքր խրթին է, որը, սակայն, կարելի է մեղմել MS Word խմբագրիչի համապատասխան ներդրված կարգավորման (References, Ссылки) միջոցով, ընթերցողն ստիպված է անընդհատ հայացքը կտրել տեքստից՝ հղման աղբյուրը տողատակում կամ աշխատանքի վերջում նայելու համար:

Շարունակվող համարակալման ոճի տարատեսակներն են Բրիտանական ստանդարտի շարունակական (British Standard running notes), Ժամանակակից հասարակագիտական հետազոտությունների ընկերակցության (MHRA style), Չիկագոյի համալսարանի Տուրաբյան (Turabian style), Օքսֆորդի համալսարանի Օսկոլա (Oxford: Oscola): Ինչպես ներտեսչայինի դեպքում, այս ոճում ևս նշված տարատեսակները միմյանցից փոքր-ինչ տարբերվում են:

Կրկնվող համարակալում: Այս ոճի դեպքում տեքստում կիրառվում է փակագծերի մեջ առնված կամ վերտողային կրկնվող համարակալում, որը կապակցված է աշխատանքի (հոդվածի, գրքի գլխի կամ ենթագլխի) վերջում տրված աղբյուրների ցուցակի հետ: Այս ոճի առանձնահատկությունն այն է, որ միևնույն աղբյուրին հղման համարը կրկնվում է: Այսինքն,

եթե ինչ-որ մի աղբյուրի հղման համարը [18]-ն է, ապա ողջ տեքստում այդ աղբյուրին հղում կատարելիս կկիրառվի նույն համարը: Ավելին, աղբյուրների ցուցակը կազմվում է ոչ թե այբբենական կարգով, այլ աշխատանքում աղբյուրներին հղման հաջորդականությամբ:

Այս ոճի *առավելություններից* են՝ միևնույն աղբյուրին հղման համար օգտագործվում է միայն մեկ թիվ, և կարիք չկա օգտագործելու հապավումներ կամ բառակապակցություններ, ինչպիսիք են «նույն տեղում», «նշված աշխատությունը», որոնք կիրառվում են շարունակական համարակալման դեպքում, նույն աղբյուրի տարբեր էջերին հղում կատարելու համար պահանջվում է ընդամենը փակագծերում տրված հղման համարի կողքին գրել էջը: *Թերություններից* է այն, որ աղբյուրին ծանոթանալու համար ընթերցողը ստիպված է հայացքը կտրել տեքստից և նայել աշխատանքի վերջում տրված ցուցակը:

Այս ոճի տարատեսակներն են Բրիտանական ստանդարտի թվային (British Standard numeric), Վանկուվերի (Vancouver style), Էլեկտրականության և Էլեկտրոնիկայի ինժեներների ինստիտուտի (IEEE style), Գիտական խմբագիրների խորհրդի (CSE style) շրջանակներում ընդունված ձևերը, որոնք ևս միմյանցից փոքր-ինչ տարբերվում են:

Ոճային վերոնշյալ խմբերին բնորոշ հղումների կարգի մասին ուղեցույցները գործնական օրինակներով բավական տարբեր են և ծավալուն: Ուստի այստեղ մենք չենք ներկայացնի այդ կարգերը, այլ կառաջարկենք հղումներ կատարելու կարգի և աղբյուրների մատենագիտական տվյալները լրացնելու երկու միջոց: Դրանք են.

1. **Ինքնուրույն** – համացանցում հասանելի են վերոնշյալ բոլոր ոճային տարատեսակներով հղում կատարելու կարգի և աղբյուրների մատենագիտական տվյալների ներկայացման ուղեցույցներ: Սկսնակ հետազոտողը կարող է դրանց ծանոթանալ առցանց կամ ներբեռնել համակարգչում: Որպես օրինակ կարող ենք առաջարկել ներտեքստային Յարվարդյան [3], շարունակական համարակալմամբ Օքսֆորդյան [4] և կրկնվող համարակալմամբ Վանկուվերյան [5] ոճով հղումների ուղեցույցները:
2. **MS Word խմբագրիչ** ունի աղբյուրների մատենագիտական տվյալները բոլոր երեք ոճերի տարատեսակներով փոխակերպող մեխանիկական համակարգ. անհրաժեշտ է միայն համապատասխան տողերում ճշգրտորեն լրացնել օգտագործվող աղբյուրի մատենագիտական տվյալները և ընտրել հղման ոճային տարատեսակը: Բավական պարզ այդ մեխանիզմի աշխատանքին Word 2007-2013 խմբագրիչում կա-

րելի է ծանոթանալ հենց Microsoft-ի կայքում, օրինակ՝ անգլերենով [6] և ռուսերենով [7]:

3.2 Օգտագործված աղբյուրների մատենագիտական տվյալների ներկայացումը

Աղբյուրների մատենագիտական տվյալները թերի կամ ոչ ճշգրիտ ներկայացնելը կարող է համարվել տեխնիկական թերություն, իսկ եթե այնքան թերի է, որ գործնականում անհնար է կամ խիստ դժվար է աղբյուրը գտնելը, ապա դա կարող է անգամ համարվել գրագողություն: Սա նշանակում է, որ աղբյուրների մատենագիտական տվյալների ճշգրիտ ներկայացումը ևս ունի առանցքային նշանակություն հետազոտական աշխատանքների համար: Այս առումով, հարկ է հաշվի առնել երկու հանգամանք.

1. Հղումների բոլոր ոճերի դեպքում պահանջվում են աղբյուրների գրեթե միևնույն տվյալները,
2. Հղումների ոճային յուրաքանչյուր տարատեսակի դեպքում մատենագիտական այդ տվյալները նշվում են տարբեր հերթականությամբ:
Ստորև տրված են որոշ օրինակներ.

Գիռք, գրքուկ

1. Հեղինակի ազգանունը, անունը (երբեմն՝ միայն առաջին տառը)
2. Աշխատության վերնագիրը
3. Հրատարակչությունը
4. Հրատարակման վայրը
5. Հրատարակման տարեթիվը

Օրինակ՝ Karskens, Grace, *The Rocks: life in early Sydney*, Melbourne University Press, Carlton, 1997.

Հոդված ժողովածուից

1. Հեղինակի ազգանունը, անվան առաջին տառը
2. Հոդվածի (գլխի, ենթագլխի) վերնագիրը
3. Ժողովածուի խմբագրի/ների անվան առաջին տառը, ազգանունը
4. Ժողովածուի վերնագիրը
5. Հրատարակչությունը
6. Հրատարակման վայրը
7. Հրատարակման տարեթիվը
8. Օգտագործված հատվածի էջը

Օրինակ՝ Curthoys, A., “History and identity”, in W. Hudson & G. Bolton (eds), *Creating Australia: changing Australian history*, Allen & Unwin, Sydney, 1997, pp. 23-38.

Յոդված ամսագրից

1. Յեղիևակի ազգանունը, անվան առաջին տառը
2. Յոդվածի վերնագիրը
3. Ամսագրի հերթ. համարը
4. Յրատարակման տարեթիվը
5. Օգտագործված հատվածի էջը

Օրինակ՝ Kozulin, A., “Literature as a psychological tool”, *Educational Psychologist*, vol. 28, no. 3, 1993, pp. 253-265.

Յոդված թերթից

Անհեղինակ հոդված

“UNSW gains top ranking from quality team”, *Sydney Morning Herald*, 30 February, 1994, p. 21.

Յեղիևակային հոդված

Donaghy, B., “National meeting set to review tertiary admissions”, *Campus News*, 3-9 March, 1994, p. 3.

Չիրատարակված կյուրե

1. Յեղիևակի ազգանունը, անվան առաջին տառը
2. Վերնագիրը
3. Կյուրեի տեսակը
4. Ներկայացման վայրը
5. Տարեթիվը

Օրինակ՝ Ballard, BA, “*The seeing machine: photography and the visualisation of culture in Australia, 1890-1930*”, PhD thesis, University of Melbourne, 2003.

Կամ

Fitzsimmons, D, “*Who chooses who belongs: tactics and strategies and migrant literature*”. Paper presented at the AULLA & FILLM conference, James Cook University, Cairns, 15-19th July 2005.

Ռադիո- և հեռուստահեռարձակում

1. Վերնագիրը, սերիալի դեպքում՝ սկզբում սերիան
2. Ձևաչափը
3. Ձայնագրման ստուդիան
4. Ձայնագրման վայրը
5. Ձայնագրման տարեթիվը

Օրինակ՝ *My Brilliant Career*, motion picture, New South Wales Film Corporation, distributed by Australian Video, Australia, 1979.

կամ

Going backwards: Four Corners, television program, Australian Broadcasting Corporation, Sydney, 9 July, 2001.

Տեսաֆիլմ

1. Վերնագիրը, սերիալի դեպքում՝ սկզբում սերիան
2. Ձևաչափը
3. Չայնագրման ստուդիան
4. Չայնագրման վայրը
5. Չայնագրման տարեթիվը

Օրինակ՝ *My Brilliant Career*, 1979, motion picture, New South Wales Film Corporation, distributed by Australian Video, Australia.

Առցանց տարբերակի դեպքում

The Overlander, *Overlander.tv: Aboriginal tent embassy*, Canberra, 2007, online video, մատչելի է 31 July 2007, Հասանելի է <<http://www.youtube.com/watch?v=abMIHjO2nh4>>

Տեսա- կամ ձայներից

1. Վերնագիրը, սերիալի դեպքում՝ սկզբում սերիան
2. Ձևաչափը
3. Չայնագրման ստուդիան
4. Չայնագրման վայրը
5. Չայնագրման տարեթիվը

Օրինակ՝ *Australia through time*, CD-ROM, Random ROM in assoc. with the ABC, Sydney, 1994.

Համացանցային հրապարակումներ

Համացանցային աղբյուրներին հղում կատարելու կարգը նույն է, ինչ դրանց տեքստային տպագիր տարբերակներին հղում կատարելու դեպքում: Սակայն այս դեպքում ***անհրաժեշտ է աղբյուրի մատենագիտական տվյալների մեջ ներառել նաև աղբյուրի էլեկտրոնային ամբողջական հասցեն և դրան մուտք գործելու ժամանակը***: Էլեկտրոնային շատ երկար հասցեները կարելի է «կտրել»՝ մյուս մասը շարունակելով հաջորդ տողում:

Օրինակ՝ Brugier, C., Popescu, N., “*Ukraine: the view from China*”, Alerts - N° 17 - 14 March 2014, European Union Institute for Security Studies, հասանելի է 15.03.2014
http://www.iss.europa.eu/uploads/media/Alert_17_Ukraine_China.pdf

4. Օգտագործված աղբյուրների ցանկ և գրականության ցանկ

Հայաստանյան իրականության մեջ օգտագործված աղբյուրների և գրականության ցանկերը հաճախ են շփոթում: Սրանց տարբերությունը նրանում է, որ առաջինում նշվում են միայն հետազոտության մեջ ուղղակիորեն օգտագործված/հղում արված աղբյուրները, իսկ երկրորդի դեպքում՝ և՛ ուղղակիորեն օգտագործված, և՛ այն աղբյուրները (*անսայլման առանձնացված՝ հատուկ վերնագրով*), որոնք ուղղակիորեն չեն հիշատակվել հետազոտության մեջ, բայց ազդել են դրա հեղինակի հայացքների ձևավորման վրա:

Ինչպես հղումների դեպքում աղբյուրների մատենագիտական տվյալները ներկայացնելիս, այնպես էլ օգտագործված աղբյուրների և գրականության ցանկերը կազմելիս առաջնորդվում են տարբեր սկզբունքներով: Հաճախ հղումների կոնկրետ ոճի դեպքում կիրառվում է այդ ցանկերի կառուցման այս կամ այն սկզբունքը:

Ընդհանուր առմամբ, աղբյուրների ցանկերի կառուցման համար կիրառում են հետևյալ սկզբունքները.

1. Սկզբում տրվում են առաջնային, ապա՝ երկրորդային աղբյուրները:
2. Հղումների որոշ ոճերի դեպքում կիրառվում են աղբյուրների դասակարգման լեզվական առաջնայնության և այբբենական կարգեր. աղբյուրների ցանկի ամեն բաժնի ներսում այբբենական կարգով դասակարգվում են սկզբում՝ հայերեն, ապա՝ օտարալեզու աղբյուրները:
3. Աղբյուրները ներկայացվում են տիպաբանորեն՝ սկզբնաղբյուրներ (սրանք ևս պետք է առանձնացնել ըստ տեսակների՝ նորմատիվ-իրավական ակտեր, հարցումներ և այլն), տպագիր և էլեկտրոնային գրքեր (ներառյալ՝ մենագրությունները, գրքույկները, ժողովածուները), տպագիր և էլեկտրոնային ամսագրային հոդվածներ, տպագիր և էլեկտրոնային տեքստային դասախոսություններ, չիրատարակված նյութեր, զեկույցներ, ատենախոսություններ, տպագիր և էլեկտրոնային մամուլի հրապարակումներ, տեսա- և ձայնագրություններ, հեռուստա- և ռադիոհաղորդումներ և այլն:

Ամփոփում

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հղումները հետազոտական աշխատանքներում ունեն առանցքային նշանակություն. դրանք անհրաժեշտ են ինչպես գրագողության կասկածները փարատելու, ակադեմիական էթիկայի նորմերը պահպանելու, այնպես էլ հետազոտողի իրազեկվածությունը տվյալ թեմայով փաստելու համար: Ըստ որում, ակադեմիական միջավայ-

րում առկա է հղումների ոճային բազմակարծություն. յուրաքանչյուր գիտակրթական հաստատություն, անգամ ստորաբաժանում, մասնագիտական ընկերակցություն, ամսագիր և հրատարակչություն առաջնորդվում է իր համար նախընտրելի ոճով: Վերջիններս էլ, իրենց հերթին, ունեն տարատեսակներ, որոնք, առաջնորդվելով տվյալ ոճի ընդհանուր կանոններով, կարող են նաև փոքր-ինչ տարբերվել միմյանցից, օրինակ՝ աղբյուրների մատենագիտական տվյալների ներկայացման հաջորդականության հարցում:

Օգտագործված աղբյուրներ

- [1] C. Neville, The complete guide to referencing and avoiding plagiarism, 2nd խմբ., New York: Open University Press, 2010.
- [2] The Harvard College Writing Program, “The Exception: Common Knowledge,” 2014. [Առգիծ]. Հասանելի է <http://isites.harvard.edu/icb/icb.do?keyword=k70847&pageid=icb.page342055>. [Մատչելի էր 16 06 2014].
- [3] The University of Western Australia, “Harvard citation style,” UWA Information Services, 2014. [Առգիծ]. Հասանելի է: <http://guides.is.uwa.edu.au/content.php?pid=43218&sid=318559>. [Մատչելի էր - ին 18 06 2014].
- [4] «Oxford referencing style,» The University of Western Australia, 2014. [Առգիծ]. Հասանելի է: <http://guides.is.uwa.edu.au/content.php?pid=385139&sid=3156563>. [Մատչելի էր 18 06 2014].
- [5] London South Bank University, „How to Do Your Referencing: Numeric Style,“ 2014. [Առգիծ]. Հասանելի է: <http://www1.lsbu.ac.uk/library/helpsheets/hs28.pdf>. [Մատչելի էր 18 06 2014].
- [6] Microsoft Office, “Create a bibliography,” Microsoft Office, [Առգիծ]. Հասանելի է <http://office.microsoft.com/en-us/word-help/create-a-bibliography-1A102809686.aspx?CTT=5&origin=HA102813283>. [Մատչելի էր 18 06 2014].
- [7] Microsoft Office, «Автоматическое форматирование списков литературы с помощью стилей APA, MLA, Chicago,» Microsoft Office, [Առգիծ]. Հասանելի է: <http://office.microsoft.com/ru-ru/word-help/1A102813283.aspx?CTT=5&origin=HA102809686>. [Մատչելի էր 18 06 2014].

2.3. ԳՐԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Գիտության, գիտականության և գիտական էթիկայի ամենամեծ «թշնամին», թերևս, գրագողությունն է: Այն ակադեմիական կանոնների խախտման ամենաշատ հանդիպող ձևերից մեկն է: Ավելին, ինչպես նկատում են որոշ մասնագետներ, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հանգեցրել է գրագողության ձևերի, միջոցների բազմազանեցման ու կատարելագործման, և այսօր արդեն «մի՛ խաբիր» արտահայտությունը փոխարինվել է «մի՛ բացահայտվիր» արտահայտությամբ [1:1]:

Գրագողությունը մեծ մարտահրավեր է և ահազանգ ակադեմիական միջավայրին ու, առաջին հերթին, գիտակրթական հաստատություններին, քանի որ այդ կերպ, մի կողմից, ոտնահարվում են հեղինակային սեփականության իրավունքներն ու գիտական էթիկան, իսկ մյուս կողմից, որպես գողության և խաբեության ձև՝ գրագողությունը ոտնահարում է անձի արժանապատվությունը և հանրային բարոյականության նորմերը: Բացի դրանից, գրագողության լայն տարածումն ու դրա միջոցների, ձևերի կատարելագործումն արժեզրկում են գիտությունն ու գիտական գործունեությունն ընդհանրապես. փաստորեն, գիտական գործունեությամբ զբաղվողը երաշխավորված չէ, որ իր երկար տարիների մտավոր, ստեղծագործական աշխատանքի արդյունքը «իրաջբով» չի յուրացվի մեկ ուրիշի կողմից:

Դեռևս անտիկ շրջանից հայտնի գողության, խաբեության այդ ձևի ելությունը հասկանալու համար ստորև ամփոփ ձևով կանդորադառնանք դրա *բնորոշումներին, տարատեսակներին և կանխարգելման միջոցներին*:

1. Ակադեմիական անազնվություն և գրագողություն

Գրագողությունն ակադեմիական անազնվության, գիտական, ակադեմիական էթիկայի կանոնների ոտնահարման դրսևորումներից մեկն է: Որպես կանոն, գիտակրթական յուրաքանչյուր հաստատություն ունենում է գրավոր շարադրված կանոնների ժողովածու՝ վարքականոն, որտեղ սահմանվում են կրթական տվյալ միջավայրի ներսում ընդունված վարքի նորմերն ու սկզբունքները, ինչպես նաև դրանց խախտման դեպքում նախատեսվող պատժի ձևերը: Ահա ակադեմիական անազնվություն համարվող դեպքերի մի տիպային ցուցակ [2:29-30].

- առանց պաշտոնական թույլտվության՝ ուսանողների միջև պայմանավորվածությունը, որի արդյունքում նրանք ներկայացնում են բովանդակությամբ նույն կամ շատ նման աշխատանքներ,

- կեղծարարությունը, երբ որպես ուսումնական առաջադրանք՝ որպես սեփական մտավոր, ստեղծագործական աշխատանքի արդյունք, ներկայացվում է մեկ ուրիշի կատարած աշխատանքը՝ լինի դա հրապարակված, թե չհրապարակված, տպագիր, թե էլեկտրոնային,
- կրկնօրինակումը, երբ ուսանողը գնահատական ստանալու համար մեկից ավելի անգամ ներկայացնում է նույն կամ դրան շատ նման աշխատանք,
- քննությանը չթույլատրված հուշաթերթիկ կամ քննատետր ներկայացնելը,
- քննության ժամանակ հարցերի պատասխանները միմյանց հուշելը,
- քննությանն այլ անձի անվան տակ ներկայանալը:

2. զրագողություն և հեղինակային իրավունքների խախտում

Ինչպես նկատում են որոշ հեղինակներ, գրագողությունը և հեղինակային իրավունքների խախտումը նույնական չեն, թեև, որոշ դեպքերում, կարող են համընկնել: Այսպես, հեղինակային իրավունքներն օրենքների ժողովածու են, որոնք կանոնակարգում են բնօրինակ աշխատանքների ստեղծումը, վերարտադրությունը և տարածումը, ինչպես նաև պատիժ սահմանում այդ կանոնների խախտման համար: Իսկ գրագողությունն այլ անձի խոսքի կամ գաղափարի գողությունն է ու դրանք որպես սեփականը ներկայացնելը՝ առանց համապատասխան աղբյուրի հիշատակման: Որպես կանոն, այս դեպքն օրենքով չի կանոնակարգվում: Միաժամանակ կա նաև դրանց համընկնելու հնարավորություն: Օրինակ, գաղափարը կարող է գողացվել, բայց չի կարող ամրագրվել հեղինակային իրավունքներով, այդուհանդերձ, եթե այդ գաղափարն արտացոլված է ինչ-որ հրապարակման մեջ կամ ձայնագրված է, ապա դրա յուրացումը կարելի կլինի դիտարկել թե՛ որպես գրագողություն, թե՛ որպես հեղինակային իրավունքների խախտում [3:18-19]:

3. զրագողության բնորոշումը

Ինչպես արդեն նշեցինք, գրագողությունը (անգլ. plagiarism, ռուս. плагиат) չունի միասնական բնորոշում: Այստեղ կներկայացնենք այդ երևույթի առավել ընդհանրական բնորոշումները, իսկ կոնկրետները կվերհանենք գրագողության տարատեսակները քննելիս:

Այսպես, *«Բրիտաննիկա» հանրագիտարանը* գրագողություն համարում է *այլ անձի գրավոր ստեղծագործությունը յուրացնելը և այն որպես սեփական աշխատանք ներկայացնելը*: Դա խաբեության մի տարատեսակ

Է, որը սերտորեն առնչվում է կեղծարարության և հեղինակային իրավունքների խախտման հետ **[4]**:

Մերիամ Վերստերի և Օբսֆորդի բազատրական բառարաններում գրագողություն է համարվում *ինչ-որ մեկի խոսքերի և գաղափարների յուրացումը, դրանք որպես սեփական մտքի, աշխատանքի արգասիք ներկայացնելը կամ դրանց օգտագործումն՝ առանց իրական հեղինակին հիշատակելու* **[5; 6]**:

Որոշ հեղինակներ առանձնացնում են գրագողության բնորոշման հիևգ հիմնատարրեր՝ 1. օբյեկտը (բառը, տեքստը և այլն), 2. որը վերցվել է (կամ յուրացվել է, գողացվել և այլն), 3. կոնկրետ աղբյուրից (գրքից, ամսագրից, համացանցից և այլն), 4. անձի (ուսանողի, անհատի, գիտնականի) կողմից, 5. առանց (համարժեք) հիշատակման և 6. մոլորության մեջ զգելու մտադրությամբ կամ առանց դրա **[7:70-71]**:

Ներկայացնենք նաև մի քանի հանրաճանաչ համալսարաններում կիրառվող գրագողության բնորոշումները **[8:2]**.

- մի գործողություն, երբ որևէ մեկի ստեղծագործությունը ներկայացվում է որպես սեփական աշխատանք՝ առանց հեղինակի կամ աղբյուրի համապատասխան հիշատակման (*Մելքունի համալսարան*),
- մեկ ուրիշի գաղափարների և աշխատանքի գողությունը, երբ ուսանողը բառացի արտատպում է կամ պարզապես վերաձևակերպում դրանք՝ առանց աղբյուրի համապատասխան հիշատակման (*Յարվարդի համալսարանի Ընդլայնված կրթության դպրոց*),
- այլ մարդկանց աշխատանքը կամ գաղափարների պատճենումը կամ վերաձևակերպումը սեփական աշխատանքի մեջ՝ առանց դրանց աղբյուրների լիարժեք հիշատակման (*Օբսֆորդի համալսարան*):

4. Գրագողության պատճառները և նպաստող գործոնները

Համակցելով մեր անձնական և այլ հեղինակների **[1:1; 2:31-32; 7:172-173; 8:2]** դիտարկումները՝ կարող ենք առանձնացնել գրագողություն ծնող հետևյալ հիմնական հանգամանքները.

1. *Քննությունը, ստուգաբքը ձախողելու և դրա համար ընտանիքի անդամների կողմից պախարակված լինելու վախը,*
2. *Ժամանակն արդյունավետ կառավարելու անկարողությունը, որը, որպես կանոն, արդյունք է ուսանողի ծուլության կամ աշխատանքային գերծանրաբեռնվածության, որոնք էլ սրան «ստիպում» են դիմել զարտուղի ճանապարհների՝ հանձնարարությունը ժամանակին կատարելու համար:*

3. *Այդպես ավելի հեշտ է, հատկապես՝ նոր տեխնոլոգիաների միջոցով:* Համացանցային տիրույթում կուտակված ահռելի պաշարները, կազմարարական ծառայությունների անվան տակ պատրաստի ուսումնագիտական աշխատանքներ գրելու պատվերներ կատարող ընկերություններն այսօր ուսանողների համար մեծ գայթակղություն են ստեղծում՝ անվճար կամ մատչելի գումարի դիմաց (կարևորը՝ առանց ստեղծագործական և ֆիզիկական մեծ ջանքերի) ձեռք բերելու լավ կազմված (կամ օտար լեզվից թարգմանված) աշխատանքներ:
4. *Գրագողության դեպքերի միայն փոքր մասն է բացահայտվում և բացահայտվածները հազվադեպ են լուրջ պատժի արժանանում,* որն արդյունք է բուհերում այսպիսի դեպքերի նկատմամբ մակերեսային վերաբերմունքի կամ դրա կանխարգելման ու պատժի միջոցների անբավարարության, անարդյունավետության: Սա է հիմնական պատճառը, որ ուսանողը մտածում է՝ եթե շատերն են դիմում գրագողության, ինչո՞ւ ինքն էլ չդիմի դրան: Եվ եթե ինչ-որ մեկը գրագողությամբ արժանանում է բարձր գնահատականի, ապա ինչո՞ւ պետք է ինքը չարչարվի այդ գնահատականին արժանալու համար:
5. *Հետազոտելու, սեփական մտքերը գրավոր շարադրելու ունակությունների պակասը, աղբյուրներին հղում կատարելու կարգի չհմացությունը,* որոնք արդյունք են այն հանգամանքի, որ բուհերում ոչ միշտ են ուսանողներին ուսուցանում հետազոտական ինքնուրույն աշխատանք գրելու կարգը: Օրինակ, ուսանողներին շատ հաճախ թվում է, որ աղբյուրին հղում տալով՝ բնօրինակի տեքստը նույնությամբ կամ փոքր փոփոխություններով արտատպելն արդեն գրագողություն չէ: Կամ էլ կարծում են, որ աղբյուրի տեքստն այնքան լավ է կազմված, որ կարիք չկա կամ չեն կարող այն ավելի լավ ձևակերպել:
6. *Դասավանդվող առարկայի դժվար հասկանալի լինելը,* որի շրջանակներում տրված հանձնարությունը կատարելու համար ուսանողն, անգամ գիտակցելով պատժվելու ռիսկը, դիմում է գրագողության: Եվ, հակառակը, *առարկայի անհետաքրքիր լինելը* ևս դրդում է ուսանողներին դիմել գրագողության՝ «ձանձրությից» խուսափելու համար: Այդ կերպ նրանք արտահայտում են իրենց վերաբերմունքն առարկայի նկատմամբ:

5. Գրագողության տարատեսակները

Որպես կանոն, առօրյայում գրագողության տակ ենթադրվում է ինչ-որ մի հրապարակման կամ դրա մի մասի ներառումը սեփական աշխա-

տանքում՝ առանց համապատասխան աղբյուրի հիշատակման: Սակայն դա ընդամենը գրագողության տարատեսակներից մեկն է: Գրագողության տարատեսակներից են նաև սխալ, կեղծ աղբյուրին հղում կատարելը կամ իրական աղբյուրին սխալ ձևով հղում կատարելը, ինչպես նաև ինքնագողությունը՝ ինչ-որ առարկայի կամ քննության ժամանակ արդեն մեկ անգամ գնահատված սեփական ուսումնա(գիտա)կան աշխատանքը մեկ այլ առարկայի կամ քննության ժամանակ որպես նոր ինքնուրույն աշխատանք ներկայացնելը:

Ընդհանուր առմամբ, այլ հեղինակների մտքերի, գաղափարների յուրացումը, դրանք ներկայացնելով որպես սեփական մտահղացում, համարվում է գրագողություն: Այն կարող է դրսևորվել տարբեր ձևերով՝ դիտավորյալ խաբեությունից մինչև աղբյուրից պատճենում՝ առանց համապատասխան գիտական մշակման: Յետևաբար, ամեն անգամ, երբ աշխատանքում օգտագործվում են այլ հեղինակի մտքերը կամ գաղափարները, անհրաժեշտ է պատշաճ ձևով ներկայացնել դրանց աղբյուրը: Բացառություն են կազմում միայն այսպես կոչված «հանրահայտ փաստերը» կամ «դասագրքային ճշմարտությունները», որոնց մասին խոսվում է սույն ձեռնարկի՝ աղբյուրներին հղումների ձևերի, տեսակների և հղում կատարելու կարգին վերաբերող մասում (տե՛ս նախորդ բաժնում):

Ստորև կ'ներկայացնենք և կ'մեկնաբանենք ուսումնագիտական աշխատանքներում **գրագողության առավել տարածված ձևերը՝** տարբեր աղբյուրներում բերված օրինակները [2:30; 9; 10-11; 13:13] հարմարեցնելով հայաստանյան միջավայրին.

1. Դիտավորյալ խաբեություն

Երբ ուսանողն այլ մարդու կողմից ամբողջությամբ կամ մասամբ պատրաստված աշխատանքը ներկայացնում է որպես իր սեփական, մտավոր-ստեղծագործական ինքնուրույն աշխատանք: Օրինակ՝

1.1 երբ ուսանողը վճարում է այլ մարդու (կամ կազմակերպության), որպեսզի նա պատրաստի ուսումնա(գիտա)կան աշխատանք, կամ էլ պարզապես գնում է արդեն պատրաստի աշխատանք, ապա այն գնահատման (քննությանը, ստուգարքին կամ հրապարակային պաշտպանությանը) ներկայացնում գիտակրթական հաստատությունում՝ որպես իր սեփական, ինքնուրույն կատարված աշխատանք,

1.2 երբ մի ուսանողը մեկ ուրիշին է տրամադրում իր աշխատանքն՝ այն արտատպելու, պատճենելու համար, կամ էլ հենց ինքն է արտատպում, պատճենում այլ ուսանողի պատրաստած աշխատանքը,

1.3 երբ ուսանողը լրամշակում, լրացումներ ու փոփոխություններ է կատարում մեկ ուրիշի պատրաստած աշխատանքում և այն ներկայացնում որպես իր սեփական, ինքնուրույն կատարված աշխատանք: Սա չի կարելի շփոթել համատեղ, համահեղինակությամբ՝ մեկից ավելի անձանց մասնակցությամբ պատրաստված և հենց համահեղինակությամբ էլ ներկայացվող աշխատանքի հետ: Վերջին դեպքում էլ, սակայն, համատեղ աշխատանքում պետք է հստակ ներկայացված լինի, թե որ հատվածի հեղինակն ով է:

2. Արտատպում/արտագրություն/պատճենում

Գրագողության այս տեսակն առկա է այն ժամանակ,

- 2.1 երբ ուսանողը բնօրինակի տեքստը մեջբերում է նույնությամբ՝ առանց դրա աղբյուրի (պատշաճ ձևով) հիշատակման և/կամ մեջբերումը չակերտների մեջ առնելու,
- 2.2 երբ ուսանողն իր աշխատանքում ներառում է այլ անձի (հեղինակի) մտքերը, գաղափարները՝ առանց դրանց աղբյուր(ներ)ի (պատշաճ ձևով) հիշատակման:

3. Այլ հեղինակի միտքը սեփական բառերով վերծևակերպելու անկարողություն

Սա ևս ունի դրսևորման երկու ձև.

- 3.1 երբ ուսանողն, անգամ աղբյուրը պատշաճ ձևով հիշատակելով, այլ հեղինակի բառերն օգտագործում է նույնությամբ, առանց փոփոխության կամ վերածևակերպման, սակայն աղբյուրից վերցված հատվածը չի դնում չակերտների մեջ,
- 3.2 երբ ուսանողը բնօրինակի աղբյուրից վերցված հատվածի մեջ փոխում է մի քանի բառ կամ էլ զարգացնում է այդ հատվածի միտքը, սակայն երկու դեպքում էլ (պատշաճ ձևով) չի հիշատակում բնօրինակի աղբյուրը,
- 3.3 երբ ուսանողը զարգացնում է բնօրինակի աղբյուրից վերցված հատվածի միտքը, անգամ աղբյուրը պատշաճ ձևով հիշատակելով, սակայն արդյունքում անհնար կամ խիստ դժվար է դառնում տարանջատել ուսանողի սեփական և օգտագործված աղբյուրի հեղինակի միտքը: Այսպիսի դեպքերից խուսափելու համար կարելի է այլ հեղինակի միտքը «որոշ հեղինակներ նշում են, որ», «այսինչ հեղինակի կարծիքով» արտահայտությունների օգտագործմամբ ներկայացնելուց և աղբյուրը պատշաճ ձևով հիշատակելուց հետո այլ հեղինակի մտքի սեփական զարգացումը կամ դրա վերաբերյալ սեփական մոտեցումը

ներկայացնել «մեր կարծիքով», «գտնում ենք, որ» կամ նմանատիպ այլ արտահայտությունների կիրառմամբ:

4. Սեփական միտքը, գաղափարն ինքնուրույն ձևակերպելու անկարողություն

Գրագողության այս տարատեսակի դրսևորումներն են

- 4.1 երբ ուսանողն իր սեփական գաղափարները ձևակերպում է այլ հեղինակների մտքերի, բառերի կիրառմամբ՝ առանց դրանց աղբյուրի (պատշաճ ձևով) հիշատակման,
- 4.2 երբ ուսանողն իր միտքը ձևակերպում է այլ հեղինակներից տարբեր մեջբերումներ ու ձևակերպումներ իրար կցելով՝ առանց աղբյուր(ների) (պատշաճ ձևով) հիշատակման:

5. Աղբյուրներին չափից շատ հղում կատարելը

Սա այն դեպքն է,

- 5.1 երբ գիտաուսումնական աշխատանքը կազմված է գերազանցապես այլ հեղինակների հրապարակումների, մտքերի, գաղափարների ներկայացումից՝ աղբյուրների պատշաճ ձևով հիշատակմամբ, սակայն առանց դրանց վերաբերյալ սեփական մոտեցման: Արդյունքում, այդ աշխատանքը ոչ մի արժեքավոր վերլուծություն, նորույթ, ինքնատիպություն չի պարունակում,
- 5.2 երբ գիտաուսումնական աշխատանքը կազմված է գերազանցապես մեկ-երկու աղբյուրների հիման վրա: Սա չի վերաբերում հատուկ մասնագիտական (օրինակ՝ բանասիրական) աշխատանքներին, օրինակ՝ երբ թեման վերաբերում է կոնկրետ հեղինակ(ների) հայացքների կամ ստեղծագործության քննությանը:

6. Աղբյուրներից մեծածավալ մեջբերումներ կատարելը

Գրագողության այս տեսակն առկա է այն դեպքում, երբ ուսանողը, հիմնականում «ծավալ լրացնելու» նպատակով, իր աշխատանքում կատարում է երկարաշունչ և/կամ մեծաքանակ ուղղակի մեջբերումներ՝ անգամ աղբյուրի (պատշաճ ձևով) հիշատակմամբ և չակերտներ օգտագործելով: Սա ևս չի վերաբերում նախորդ կետում նշված դեպքերին, երբ ուղղակի մեջբերումները, որպես կանոն, պարտադիր են: Սակայն, ամեն դեպքում, մեջբերումների ծավալը և քանակը պետք է լինեն հիմնավորված:

7. Աղբյուրների սխալ հիշատակում

Սա առկա է այն ժամանակ,

- 7.1 երբ ուսանողն իր աշխատանքում օգտագործված մտքի, հատվածի համար հղում է կատարում մի աղբյուրի, որին ինքն անծամբ չի ծանոթացել, այլ դրան հանդիպել է մեկ այլ հեղինակի աշխատանքում: Ու-

ասնողը պետք է հղում կատարի միայն այն աղբյուրին, որին ինքն անձամբ է ծանոթացել,

7.2 երբ ուսանողն իր աշխատանքում «Օգտագործված աղբյուրների ցուցակում» ներառում է աղբյուր, որին ինքն անձամբ չի ծանոթացել և աշխատանքում դրան հղում չի արվել: Այդ ցանկում պետք է տիպաբանված ներկայացվեն միայն աշխատանքում օգտագործված աղբյուրները: Իսկ այն աղբյուրները, որոնք աշխատանքի հեղինակի համար եղել են ներշնչանքի աղբյուր կամ իր հայացքները ձևավորվել են դրանց ազդեցությամբ, պետք է ներկայացվեն օգտագործված աղբյուրների ցուցակից առանձին ցուցակով, օրինակ՝ «Թեմատիկ գրականություն» վերնագրի տակ,

7.3 երբ ուսանողն օգտագործված աղբյուրները հիշատակում է ոչ պատշաճ ձևով: Յաճախ այսպիսի սխալները որակվում են «տեխնիկական թերություն» ընդհանուր բնորոշմամբ, բայց ոչ բոլոր թերություններն են այդքան «անմեղ»: Մասնավորապես, տեխնիկական թերություն չի կարելի համարել (հետևաբար, պետք է համարել գրագողություն) օգտագործված աղբյուրին հղում կատարելիս դրա մատենագիտական տվյալների մեջ այնպիսի վրիպակը կամ հղում կատարելու կարգի այնպիսի խախտումը, որն անհնար կամ խիստ դժվար է դարձնում աշխատանքում մեջբերված տվյալների (զաղափարների, փաստական և այլ տվյալների) հավաստիության ստուգումը,

7.4 երբ ուսանողն իր աշխատանքում օգտագործված մտքի, հատվածի համար հղում է կատարում սխալ (կամ կեղծ), այդ թվում՝ գոյություն չունեցող աղբյուրի: Դա կարող է լինել ինչպես ուսանողի դիտավորության, օրինակ՝ ընթերցողին դիտավորյալ խաբելու ցանկության, այնպես էլ տեխնիկական խնդրի արդյունք: Վերջինս հաճախ հանդիպում է համացանցային հրապարակումների դեպքում, երբ հղման մեջ տրված համացանցային հասցեով ինչ-որ ժամանակ հասանելի հրապարակումը տեղափոխելուց կամ կայքը փակվելուց հետո տվյալ հասցեով այլևս հասանելի չի լինում: Նման դեպքերից խուսափելու համար պետք է նախ աշխատանքը հանձնելուց առաջ ստուգել համացանցային հասցեների հասանելիությունը, երկրորդ, այդպիսի հրապարակումների մատենագիտական տվյալներում անպայման նշել տվյալ համացանցային հասցեին մուտք գործելու ժամկետը:

8. Այլ անձանց աջակցությունը չհիշատակելը

Սա այն դեպքն է, երբ ուսանողն իր աշխատանքում չի հիշատակում այն անձանց (համակուրսեցիներ, լաբորանտներ, մասնագետներ, արտա-

քին այլ ռեսուրսներ), որոնք աջակցել են նրան աշխատանքի պատրաստման, օրինակ, հանրային կարծիքի հարցումների, փորձագիտական հարցազրույցների անցկացման, տվյալների մշակման գործում: Սա չի վերաբերում առանց այլ անձանց աջակցության պատրաստված աշխատանքներին, ինչպես նաև պետք է հիշատակել աշխատանքի գիտական ղեկավարին կամ խորհրդատուին (վերջիններիս տվյալներն աշխատանքի տիտղոսաթերթի վրա նշելը պարտադիր պահանջ է և դա լիովին բավարար է):

9. Գրագողություն ինքն իրենից

Որքան էլ արտասովոր է հնչում, այդուամենայնիվ, ուսանողները երբեմն դիմում են նաև ինքնագողության, օրինակ՝

- 9.1 երբ ուսանողը մասամբ կամ ամբողջությամբ կրկնօրինակում է իր՝ արդեն մեկ անգամ գնահատված աշխատանքը և այն, որպես նոր ինքնուրույն աշխատանք, ներկայացնում գնահատման մեկ այլ դասընթացի, քննության կամ հրապարակային պաշտպանության,
- 9.2 երբ ուսանողն, առանց աղբյուրի պատշաճ ձևով հիշատակման, մասամբ կամ ամբողջությամբ օգտագործում է արդեն մեկ անգամ այլ դասընթացի, քննության կամ հրապարակային պաշտպանության ժամանակ ներկայացված իր իսկ աշխատանքը:

6. Գրագողության կանխարգելման միջոցները

Գրագողության և դրա հետագա տարածման կանխարգելումը ենթադրում է մի քանի ուղղություններով հետևողական քայլերի միաժամանակյա իրականացում գիտակրթական հաստատության, պրոֆեսորադասախոսական կազմի և հենց իրենց՝ ուսանողների կողմից: Այսպես,

Գիտակրթական հաստատությունը պետք է

- ունենա ակադեմիական ազնվության վարքականոն (տպագիր և համացանցային տարբերակներով), որը պետք է տարածվի ուսումնական և գիտական բոլոր ստորաբաժանումներում ու մատչելի լինի հատկապես ուսանողների համար,
- պետք է ունենա ուսումնա(գիտա)կան աշխատանքների պատրաստման ուղեցույց-կարգ (հնարավոր է՝ հարմարեցված ամեն մասնագիտության կամ ֆակուլտետի համար), որը ևս պետք է տարածվի ուսումնական և գիտական համապատասխան ստորաբաժանումներում ու մատչելի լինի ուսանողների համար,
- բոլոր մասնագիտությունների գծով բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում ուսումնական խորհրդատուների և գիտական ղեկավարների միջոցով ուսանողներին ծանոթացնի այդ վարքակա-

նոնի և ուղեցույց-կարգի հետ, իսկ մագիստրատուրայի կրթական ծրագրերում՝ խորացնի մասնագիտական հետազոտության մեթոդների վերաբերյալ դասընթացները,

- արգելի ուսանողներին՝ գրավոր (միջանկյալ) քննությունների ժամանակ պարզ վերարտադրել կարդացած տեքստը և պահանջել նյութը վերաշարադրել սեփական բառերով,
- ներդնի գրավոր աշխատանքներում գրագողությունը բացահայտող տեխնիկական միջոցներ,
- պետք է լինի խստապահանջ և հետևողական վերը նշված վարքականոնի և ուղեցույց-կարգի նորմերի, դրույթների՝ աշխատակիցների և ուսանողների կողմից պահպանման, խախտումները կանխելու և խախտողներին համարժեք պատժելու հարցերում:

Պրոֆեսորադասախոսական կազմը (հատկապես կրթական ծրագրերի խորհրդատուներն ու ղեկավարները և աշխատանքների գիտական ղեկավարները) պետք է

- հետևողական և պատրաստակամ լինեն, մի կողմից, ուսանողներին վերը նշված վարքականոնի և ուղեցույց-կարգի դրույթները ներկայացնելու, բացատրելու, մյուս կողմից, դրանց խախտումները կանխելու գործում,
- օգնեն ուսանողին ճիշտ պլանավորել հետազոտական աշխատանքի իրականացումը,
- նպաստեն ուսանողի մոտ քննադատական և ինքնուրույն մտածողության զարգացմանը,
- հանգամանորեն ծանոթանան ուսանողների պատրաստած աշխատանքներին՝ ուսանողին բացատրելով նրա կատարած սխալներն ու աշխատանքի թերությունները, և, ըստ էության, լինելով այդ աշխատանքի ոչ պաշտոնական գրախոս-քննադատը, և, միաժամանակ, կանխելով գրագողության ցանկացած փորձ՝ լինի դիտավորյալ, թե ոչ դիտավորյալ: Մասնավորապես, վերջինիս համար օգտակար կարող են լինել ուսանողի աշխատանքում օգտագործված աղբյուրների հավաստիության ստուգումները, աշխատանքի տարբեր հատվածների շարադրման ոճի, օգտագործված աղբյուրների տեքստերի և ուսանողի ներկայացրած աշխատանքի համապատասխան հատվածի ձևակերպումների համեմատությունը, աշխատանքի տարբեր հատվածներից վերցված նախադասություններ կամ դրանց մի մասը համացանցային փնտրողական համակարգերով ստուգելը,

- պարբերաբար փոփոխեն ուսումնական առաջադրանքներն ու աշխատանքների թեմաները՝ միաժամանակ խրախուսելով ուսումնա-(գիտա)կան աշխատանքներում ինքնուրույն «դաշտային» հետազոտությունների կազմակերպումը,
- ուսումնա(գիտա)կան աշխատանքների վրա իրենց՝ որպես գիտական ղեկավարի անունների անկայությունն ընկալեն որպես լրացուցիչ պատասխանատվություն այդ աշխատանքի որակի համար:

Ուսանողները պետք է

- խստագույնս հետևեն ակադեմիական ազնվության վարքականոնին և առաջնորդվեն ուղեցույց-կարգի պահանջներով,
- ճիշտ հաշվարկեն կատարելիք աշխատանքն ու դրա համար անհրաժեշտ ժամանակը,
- զարգացնեն քննադատական ու ինքնուրույն մտածողությունը և բացառեն ինչպես գրագողությանը նպաստող հանգամանքները, այնպես էլ գրագողության՝ վերը նշված ձևերը՝ մասնավորապես, երբեք չօգտվեն հետազոտական աշխատանքներ պատրաստելու պատվերներ ընդունող ծառայություններից (խոսքը չի վերաբերում պարզապես ձեռագիր տեքստը տպագիր հավաքելու ծառայությանը), չուրացնեն ուրիշների պատրաստած աշխատանքները, այդ թվում՝ համացանցից ներբեռնվածները, հարգանք ցուցաբերեն այլ հեղինակների կատարած աշխատանքի հանդեպ՝ վերլուծելով, ապա վերաձևակերպելով և սեփական բառերով վերաշարադրելով նրանց մտքերը, միաժամանակ, պահպանելով օգտագործված աղբյուրներին հղում կատարելու կարգը, տեքստում հստակ տարանջատեն այլ հեղինակների և սեփական մտքերը,
- պարբերաբար խորհրդակցեն գիտական ղեկավարի կամ խորհրդատուի հետ, եթե հետազոտական աշխատանքի հետ կապված ինչ-որ հարցում ունեն կասկածներ կամ անվստահություն (օրինակ՝ կարելի՞ է արդյոք այս աղբյուրին հղում կատարել, ճի՞շտ է արդյոք հասկացել կարդացածի միտքը, ճի՞շտ է արդյոք ձևակերպել ու հիմնավորել սեփական միտքը և այլն):

Ամփոփում

Այսպիսով, որպես ակադեմիական անազնվության տեսակ՝ գրագողությունն իրական վտանգ ու մարտահրավեր է թե՛ հասարակության, թե՛ գիտության համար: Այդ արատավոր երևույթի դեմ պայքարելու, այն կանխարգելելու համար անհրաժեշտ են համակցված, համալիր և գործնական

միջոցառումներ՝ ակադեմիական վարքականոսի և հետազոտական աշխատանքների պատրաստման ուղեցույց-կարգի ընդունում, դրա ներդրում գիտաուսումնական պրակտիկայում, խստապահանջ վերաբերմունք այդ փաստաթղթերի դրույթների պահպանման և խախտման նկատմամբ: Անհրաժեշտ է նաև հստակեցնել գրագողության եռթյունը՝ միանշանակ և միասնական ցուցակով ամրագրելով գրագողության ձևերն ու տարատեսակները, հնարավորինս վերացնելով դրա պատճառներն ու նպաստող գործոնները՝ միաժամանակ բոլոր մակարդակներում համահամալսարանական, պրոֆեսորադասախոսական և ուսանողական, ապահովելով նույնքան միանշանակ և միասնական մոտեցում այդ երևույթի նկատմամբ՝ որպես ակադեմիական էթիկայի և կարգի կոպիտ խախտում՝ արժանի հանրային պարսավանքի և վարչական պատժի:

Օգտագործված աղբյուրներ

- [1] Lathrop, A., Foss, K.E., “Student Cheating and Plagiarism in the Internet Era: A Wake-up Call”. Libraries Unlimited, Englewood, Colorado, 2000
- [2] Neville, C., “The complete guide to referencing and avoiding plagiarism”. 2nd Ed., Open University Press, NY, 2010
- [3] Dames, K.M., “Plagiarism Is Not the Same as Copyright Violation”. In Williams, H. (Ed.), “*Plagiarism. Issues that Concern You*”, Greenhaven Press, Farmington Hills, 2008
- [4] “plagiarism”. Encyclopædia Britannica. Encyclopædia Britannica Ultimate Reference Suite, 2013
- [5] “plagiarism”. The Merriam Webster Encyclopedia of Britannica Company. <http://www.merriam-webster.com/dictionary/plagiarize> [Հասանելի էր 07.06.2014]
- [6] “plagiarism”. Oxford Dictionaries. <http://www.oxforddictionaries.com/definition/english/plagiarism> [Հասանելի էր 07.06.2014]
- [7] Sutherland-Smith, W., “Plagiarism, the Internet and Student Learning. Improving Academic Integrity”, Routledge, NY, 2008
- [8] Roberts, T.S., “An Introduction”. In Roberts, T.S. (Ed.), “*Student Plagiarism in an Online World: Problems and Solutions*”. Information Science Reference, London, 2008
- [9] Plagiarism. Oxford Students. University of Oxford. <http://www.ox.ac.uk/students/academic/guidance/skills/plagiarism> [Հասանելի էր 07.06.2014]

- [10] Forms of plagiarism and collusion. University of Cambridge.
<http://www.admin.cam.ac.uk/univ/plagiarism/examiners/forms.html>
[Հասանելի էր 07.06.2014]
- [11] What Constitutes Plagiarism? Harvard Guide to Using Sources. A Publication of the Harvard College Writing Program.
<http://isites.harvard.edu/icb/icb.do?keyword=k70847&pageid=icb.page342054>
[Հասանելի էր 07.06.2014]
- [12] Common Forms of Plagiarism. The University of New South Wales, Australia.
<https://student.unsw.edu.au/common-forms-plagiarism> [Հասանելի էր 07.06.2014]
- [13] “Acknowledging knowledge. An academic guide to referencing”, University of Southampton,
http://www.learnwithus.southampton.ac.uk/academicSkills/pdfs/acknowledging_knowledge.pdf [Հասանելի էր 07.06.2014]

ՎԵՐՁԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ
ԳԻՏԱԴԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐԵԼՈՒ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ամփոփելով աշխատանքի գլուխներում շարադրված մեթոդական ցուցումները՝ պետք է փաստենք, որ գիտահետազոտական ցանկացած աշխատանք գրելիս հեղինակը պետք է իմանա գիտական հետազոտություն կատարելու հիմնական սկզբունքները:

Կուրսային և դիպլոմային աշխատանքները, ըստ էության, առաջին գիտական աշխատանքներն են, որոնք բարձրագույն կրթություն ստացող յուրաքանչյուր անհատ կատարում է իր ուսումնառության ընթացքում: Ուստի բուհի ուսանողը պարտավոր է իմանալ մի քանի կանոններ, որոնք կազմում են գիտական աշխատանքներ գրելու հմտությունների հիմքը: Ի մի բերելով ձեռնարկում ներկայացված դրույթները՝ ստորև ներկայացնում ենք գիտահետազոտական աշխատանք գրելու աստիճանական քայլերը և հիմնական սկզբունքները:

Այսպես, գիտական հետազոտության թեման (հիմնախնդիրը) ընտրելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքներին.

1. Թեման պետք է լինի սակավ ուսումնասիրված, որպեսզի աշխատանքում ապահովվի գիտական նորոյթ, ինչը հեղինակին կստիպի գիտական նոր մոտեցում ցուցաբերելու և տեսակետ հայտնելու ուղիներ փնտրել:
2. Թեմայի վերնագիրը պետք է արտահայտի որոշակիություն, որպեսզի ընդհանուր գծերով պարզ դառնա աշխատանքի նպատակը, և ուսումնասիրության ընթացքում շփոթ չառաջանա վերնագրի ու բովանդակության միջև:
3. Թեմայի վերնագիրը պետք է գիտական ձևակերպում և «գրավչություն» ունենա, քանի որ խրթին ներկայացված վերնագիրը վանում է անգամ տվյալ ոլորտում մասնագիտացած հետազոտողին:
4. Թեման պետք է ունենա աղբյուրագիտական (հասարակական գիտությունների համար) և տեսական ու փորձարարական (բնական, տեխնիկական, մասամբ՝ հասարակական գիտությունների համար) հիմք, որպեսզի ապահովվի ուսումնասիրության սահուն ընթացքը:
5. Թեման պետք է լինի արդիական և ունենա գործնական անհրաժեշտություն ու կիրառելիություն (բնական և տեխնիկական գիտու-

թյունների համար՝ փորձով ապացուցելի, իսկ հասարակական գիտությունների համար՝ հասարակության հոգևոր և սոցիալ-տնտեսական կարիքների համար այժմեական կարևորության հիմնավորմամբ)՝ իմաստ հաղորդելով կատարվող աշխատանքին:

Ուսումնասիրության թեմայի ընտրությունից ու հաստատումից հետո անհրաժեշտ է զբաղվել թեմային առնչվող նյութերի՝ սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների (բնական և տեխնիկական գիտությունների դեպքում՝ տեսական հիմնադրույթների և փորձառական նյութերի) հավաքմամբ: Այնուհետև հարկ է ընթերցել հավաքված գրականությունը՝ ընթացքում առանձնացնելով ուսումնասիրության թեմային վերաբերող նյութերը: Յենց այս գործընթացում էլ առավել հստակեցվում է ուսումնասիրության հիմնական նպատակը, և ի հայտ է գալիս աշխատանքի կառուցվածքը (գլուխները և բաժինները), քանի որ առանձնացվող նյութերը, ըստ բովանդակության, դասավորվում են առանձին «փաթեթներում»: Արդյունքում ստեղծվում է ուսումնասիրության «տեղեկատվական բազա», ինչը թույլ է տալիս անցնել թեմայի շարադրմանը:

Գիտահետազոտական աշխատանքի շարադրման ընթացքում շատ կարևոր է մի քանի սկզբունքների հետևելը: Դրանցից առավել կարևորներն են.

1. Ուսումնասիրողի միտքը պետք է շարադրված լինի հստակ տրամաբանական հաջորդականությամբ, որպեսզի ընթերցողի համար պարզ լինի հեղինակի արտահայտած տեսակետի էությունը:
2. Շարադրման ոճը պետք է համապատասխանի ակադեմիական ոճի առնվազն նվազագույն մակարդակին, որպեսզի ապահովվի ուսանողի մտքի գիտական զարգացումը:
3. Շարադրման հենց սկզբից որպես ուղենիշ պետք է լինի սեփական մտքի (շարադրման ընթացքում՝ տեսակետների) արտահայտումը, որպեսզի ուսումնասիրության վերջում աշխատանքը ներկայացվի որպես սեփական գիտական մտքի արգասիք:
4. Ուսումնասիրողն իր մտքերն ու տեսակետները շարադրելիս պետք է դրանք հիմնավորի տեսական հիմնադրույթներով ու փորձարարական արդյունքով (պատմաբանասիրական ոլորտում՝ նաև սկզբնաղբյուրների տեղեկություններով և նախորդած ուսումնասիրություններով), որպեսզի ամփոփվի թեմային որևէ կերպ առնչվող «տեղեկատվական բազան», իսկ արտահայտած մտքերն ու տեսակետներն առավել հիմնավոր ու համոզիչ լինեն:

5. Շարադրման ընթացքում անհրաժեշտ է խուսափել ընդարձակ մեջբերումներից. օրինակ՝ ցանկալի չէ, որ պատմաբանն ընդարձակ մեջբերումներ անի սկզբնաղբյուրներից, իսկ մաթեմատիկոսը որևէ նորույթ առաջարկելիս նորից ապացուցի արդեն ապացուցված թեորեմը՝ տալով դրա ապացուցման ամբողջ ընթացքը (եթե նպատակն ապացուցման ընթացքում որևէ քայլ ցույց տալը չէ):
6. Շարադրման ընթացքում հարկ է խուսափել նաև տեքստում տրվող փաստերի և վիճակագրական տվյալների առատությունից, ինչը զգում է աշխատանքն ընթերցելու հրապույրը: Այդպիսի տվյալները, այդուհանդերձ, անչափ կարևոր են, ուստի անհրաժեշտ է դրանք ներկայացնել աղյուսակների, դիագրամների և գրաֆիկների տեսքով: Կարելի է վիճակագրական առատ տեղեկությունները տալ նաև հավելվածում:
7. Թեմայի շարադրման ընթացքում պետք է ուշադրությամբ հետևել գիտական ապարատի (հատկապես հղումների) ճշգրիտ կիրառմանը, ինչից կարելի է ուսումնասիրողի գիտական լրջության աստիճանի վերաբերյալ որոշակի դատողություններ անել: Հարկ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ գիտական ապարատը տարբեր պետություններում, անգամ՝ նույն պետության ներսում գիտակրթական տարբեր կենտրոններում և տարբեր գիտությունների պարագայում ունենում է որոշակի առանձնահատկություններ: Դժվար չէ նկատել, որ անգամ մեթոդական այս ձեռնարկի հեղինակներից յուրաքանչյուրը նախապատվելի է համարել հղման կամ գրականության ցանկի ներկայացման՝ մյուսներից տարբերվող ոճ: Հղման առանձնահատկություններից է նաև նրա զուտ տեխնիկական դասիչը, այսինքն՝ յուրաքանչյուր ամսագիր ներկայացնում է իր տեխնիկական պահանջները, որոնք հավատարիմ են մնում հղումների ընդհանուր մեթոդաբանությանը, սակայն ունեն հրատարակչա-ներկայացուցչական առանձնահատկություններ:

Հետազոտական աշխատանքի բուն տեքստն ամբողջացնելուց հետո անհրաժեշտ է ամփոփիչ եզրահանգումներ կատարել: Եթե խոսքը կուրսային կամ դիպլոմային աշխատանքի, մագիստրոսական կամ թեկնածուական թեզի մասին է, ապա հենց այդ դեպքերում պետք է գրել ներածական և ամփոփիչ բաժինները: Առաջին հայացքից կարծես թե տարօրինակ է թվում, բայց աշխատանքի հենց այս փուլում է ճիշտ, որ ներկայացվի աշխատանքի առաջին՝ ներածական մասը, քանի որ միայն ուսումնասի-

րության վերջում է հնարավոր ամբողջական պատկերացում կազմել դրա ընթացքի ու հիմքի մասին:

Այսպիսով՝ ներածական մասը դրվում է աշխատանքի սկզբում, իսկ ամփոփիչ մասը՝ թեմայի գլուխներից հետո: Աշխատանքի վերջում տրվում է գրականության ամբողջական ցանկը՝ ըստ համապատասխան տեսակների (սկզբնաղբյուրներ, ուսումնասիրություններ, քարտեզներ և այլն):

Գիտահետազոտական աշխատանքն ամբողջացնելուց հետո հետազոտողը պետք է պատրաստ լինի իր հետազոտության հրապարակային պաշտպանությանը: Անգամ եթե խոսքը գիտական հոդվածի մասին է, երբ այն բանավոր կարող է և չներկայացվել, հեղինակը պետք է պատրաստ լինի՝ գիտականորեն հիմնավորված պատասխան տալու ընթերցողի մոտ առաջացած գրեթե ցանկացած հարցի. «գրեթե», քանի որ երբեմն ծագած հարցը կարող է մեկ այլ՝ նոր ուսումնասիրության ծնունդի պատճառ դառնալ:

Այսպիսով՝ գիտահետազոտական աշխատանք կատարելը բավականաչափ բարդ և միևնույն ժամանակ հետաքրքիր «գրադմունք» է, որը պահանջում է հետազոտական աշխատանքի որոշակի հմտությունների իմացություն: Մեթոդական այս ցուցումներն էլ հենց շարադրել ենք՝ փորձելով ներկայացնել գիտահետազոտական աշխատանքի հմտություններին առնչվող հիմնական դրույթները: Հուսով ենք, որ այս ցուցումներն ընթերցելու շնորհիվ ձեր հետազոտական հմտությունները կընձյուղվեն՝ տալով գիտական որոշակի արդյունք:

Գիտահետազոտական աշխատանք կատարելիս առավել հաճախ հանդիպող հասկացություններ

1. **Ասպեկտ**՝ տեսանկյուն, որով դիտարկվում է ուսումնասիրվող օբյեկտը (առարկան):
2. **Ատենախոսության սեղմագիր**՝ գիտական աստիճանի հայցման համար նախատեսված գիտական հրատարակություն, որն ընդգրկում է իրականացված հետազոտության հիմնական դրույթները:
3. **Ատենախոսություն**՝ գիտական աստիճանի հայցման համար ներկայացված գիտահետազոտական աշխատանք:
4. **Բանալի (հանգուցային) բառ**՝ բառ կամ բառակապակցություն, որը հնարավորինս դիպուկորեն բնորոշում է գիտական աշխատանքի կամ դրա առանձին մասերի բովանդակությունը:
5. **Գաղափար**՝ հայացքների և տեսությունների համակարգում դիրքորոշման ցուցիչ:
6. **Գիտական գեկույց**՝ գիտահետազոտական աշխատանքը ներկայացնող հրապարակային ելույթ (սովորաբար գիտաժողովի ժամանակ):
7. **Գիտական հետազոտություն**՝ գիտական նոր արդյունքի ստացման գործընթաց, ճանաչողական գործունեության տեսակ, որը բնութագրվում է օբյեկտիվությամբ, վերարտադրողականությամբ, ապացուցելիությամբ և հստակությամբ:
8. **Գիտական տեսություն**՝ գիտական հասկացությունների և պնդումների համակարգ, որն իրենից ներկայացնում է իրականության տեսական արտացոլումը և հնարավորություն է տալիս բացատրել ու մեկնաբանել ուսումնասիրության օբյեկտը:
9. **Գիտական ուսումնասիրություն**՝ նպատակաուղղված ճանաչողություն, որի արդյունքը հանդես է գալիս հասկացությունների, օրենքների և տեսությունների համակարգի տեսքով:
10. **Գիտակարգ**՝ գիտության ճյուղ, որն իր զարգացման տվյալ մակարդակում և տվյալ ժամանակահատվածում յուրացված և ներդրված է գիտության մեջ:
11. **Գիտափաստ**՝ իրադարձություն կամ երևույթ, որը կարևոր հիմք է հանդիսանում գիտական հետևության կամ պնդման համար:
12. **Դատողություն**՝ մտքի ձև, որի օգնությամբ հաստատվում կամ ժխտվում է որևէ հատկության՝ որևէ առարկայի նկատմամբ կամ էլ երկու և ավելի առարկաների միջև այս կամ այն հարաբերությունը:

13. **Թեմայի արդիականություն**՝ տվյալ հիմնախնդրի լուծման հարցում թեմայի կարևորության աստիճանը տվյալ պայմաններում:
14. **Խնդիր**՝ ձևավորված գիտական հարցերի ամբողջություն, որն ընդգրկում է ապագա ուսումնասիրությունների ոլորտը:
15. **Համանմանություն (անալոգիա)**՝ մտահանգում, որով երկու կամ ավելի առարկաների՝ մի քանի հատկանիշներով ընդհանրությունից եզրակացություն է արվում այլ հատկանիշներով տվյալ առարկաների ընդհանրության մասին:
16. **Հայեցակարգ**՝ հայացքների համակարգ, որով որոշվում են ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները, և ցույց են տրվում դրանց իրականացման ուղիները:
17. **Հասկացություն**՝ մտքի ձև, որում արտացոլվում են առարկա(ներ)ի առանցքային տարբերակիչ հատկությունները:
18. **Հետազոտության մեթոդ**՝ առկա գիտելիքի օգտագործման միջոց՝ նոր գիտելիք, գիտական արդյունք ստանալու համար:
19. **Հիպոթեզ (վարկած)**՝ գիտական ենթադրություն, որն առաջ է քաշվում որևէ երևույթ բացահայտելու և մեկնաբանելու համար:
20. **Մտահանգում**՝ մտքի ձև, որտեղ մեկ կամ մի քանի դատողություններից բխեցվում է մեկ այլ դատողություն:
21. **Սահմանում**՝ հասկացության բովանդակության հստակեցում:
22. **Տեսություն**՝ ուսմունք, գաղափարների կամ սկզբունքների, հասկացությունների, հիպոթեզների և օրենքների համակարգ, որն ամբողջացնում է գիտության կամ նրա առանձին ճյուղի հիմնադրույթները:
23. **Ուսումնասիրության առարկա**՝ ուսումնասիրության օբյեկտի շրջանակներում գտնվող առարկան կամ երևույթը դիտարկման որոշակի տեսանկյունից:
24. **Ուսումնասիրության օբյեկտ**՝ հետազոտության համար քննվող գործընթաց կամ երևույթ:
25. **Փաստարկում**՝ բացահայտ կամ ոչ բացահայտ երկխոսությամբ իրականացվող կշռադատություն, որի ընթացքում առաջադրվում և ապացուցվում է որևէ դրույթ, հերքվում են հնարավոր հակափաստարկները, ցույց է տրվում առաջադրված դրույթի ճշմարտությունը և գործողության ծրագրի նպատակահարմարությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

..... ՖԱԿՈՒԼՏԵՏ

..... ԱՄԲԻՈՆ

Կ Ո Ւ Ր Ս Ա Յ Ի Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

ԹԵՄԱ՝

Ուսանող՝

Վահագն Արզարյան
2-րդ կուրս

Ղեկավար՝

Գարուն Սարգսյան
Պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

..... ՖԱԿՈՒԼՏԵՏ

..... ԱՍԲԻՆ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ/ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ

ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Ղեկավար՝

Մ. Աբգարյան
Քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԵՐԵՎԱՆ - 2014

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը ԵՊՀ ուսանողներին և ասպիրանտներին միավորող համալսարանական ստորաբաժանում է: Նրա նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը: Այդ նպատակով ՈՒԳԸ-ն կազմակերպում է գիտաժողովներ ու սեմինարներ, հրատարակում գիտական հոդվածների ժողովածուներ:

Դեռևս 1922 թ. սկսել են գործել ամբիոնային ուսանողական գիտական խմբակներ: 1947 թ. սեպտեմբերին հրավիրվել է այդ խմբակների անդամների ընդհանուր ժողով, և որոշվել է ստեղծել համահամալսարանական ՈՒԳԸ: ԽՍՀՄ փլուզման ժամանակ Հայաստանում ճգնաժամային իրավիճակին զուգընթաց, ի թիվս գիտական ուղղվածություն ունեցող այլ ստորաբաժանումների, ՈՒԳԸ-ն դադարել է գործել: Սակայն 1996 թ. մայիսի 25-ին այն վերահիմնադրվել է, ընդունվել է նոր կանոնադրություն, ընտրվել ՈՒԳԸ գիտական խորհուրդ: Այժմ ՈՒԳԸ-ն կանոնակարգված աշխատող ուսանողական կառույց է, և նրան անդամակցում է մոտ 400 ուսանող և ասպիրանտ:

2011 թ. դեկտեմբերից մինչև 2014 թ. սեպտեմբերը ԵՊՀ 19 ֆակուլտետներում և Իջևանի մասնաճյուղում ՈՒԳԸ շրջանակներում կազմակերպվել է շուրջ 1500 միջոցառում, հրատարակվել է ՀՀ ԲՈՅ-ի պահանջներին համապատասխանող գիտական հոդվածների 15 և թեզիսների 3 ժողովածու, 5 մենագրություն, ավելի քան 600 գիտական հոդված, 150 թեզիս: Շուտով հրատարակվելու է ԵՊՀ 95-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածուն:

Հետադարձ կապ.

Հեռախոս՝ (060) 71-01-94

Էլփոստի հասցե՝ sss@ysu.am

Կայք՝ sss.ysu.am

Գիտական հրատարակումների կայք՝ www.ssspub.ysu.am

Ֆեյսբուքյան էջ՝ ԵՊՀ Ուսանողական Գիտական Ընկերություն

«ԵՊՅ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու»

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՐՎՈՂ ՀՈՂՎԱԾԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

ԵՊՅ ՈՒԳԸ կողմից պարբերաբար նախապատրաստվում է ԵՊՅ հրատարակչության կողմից հրատարակվող «ԵՊՅ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու» խորագիրը կրող հոդվածների ժողովածուն, որտեղ տեղ են գտնում ուսանողների, ասպիրանտների, հայցորդների և երիտասարդ գիտնականների գիտական հոդվածներ:

«ԵՊՅ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու»-ին հոդված կարող է ներկայացնել ՀՀ բուհերից կամ գիտահետազոտական կենտրոններից որևէ մեկում սովորող կամ աշխատող մինչև 35 տարեկան անհատը: Ներկայացված գիտական հոդվածն իր բովանդակությամբ պետք է արտացոլի հեղինակ(ներ)ի կողմից ինքնուրույն աշխատանքի արդյունքները և պարունակի գիտականորեն ընդունված ձևակերպումներ:

Հոդվածի համակարգչային շարվածքը՝ Word-97-2007 ծրագրով: Ծավալը՝ 3 ամբողջական էջից մինչև 7 էջ:

Տեքստի տառատեսակը՝ ըստ KDWIn-ի. հայերեն՝ Armenian Phonetic Unicode, ռուսերեն՝ Russian Phonetic Unicode, անգլերեն՝ US:

Առաջին էջի վերին տողի այ մասում 10 pt տառաչափով, թավ (Bold) տրվում են հեղինակ(ներ)ի Անուն Ազգանուն(ներ): Մեկ տող ներքև՝ տողի այ մասում, 10 pt տառաչափով, շեղատառ (Italic) տրվում է բուհը կամ գիտահետազոտական կենտրոնը, ֆակուլտետը, կարգավիճակը (բակալավր, մագիստրանտ, ասպիրանտ): Մեկ տող ներքև 10 pt տառաչափով գրվում է «Գիտական ղեկավար» արտահայտությունը, այնուհետև բուհ ղնելով՝ գրվում են գիտական ղեկավարի գիտական աստիճանը, կոչումը, անունն ու ազգանունը: Մեկ տող ներքև 10 pt տառաչափով գրվում է «Էլ. փոստ» արտահայտությունը, այնուհետև բուհ ղնելով՝ տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն: Մեկ տող բաց թողնելով՝ տողի մեջտեղում 10 pt տառաչափով, գլխատառերով (մեծատառերով), թավ (Bold) գրվում է հոդվածի վերնագիրը: Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի հիմնական տեքստը:

Հիմնական տեքստի տառաչափը՝ 10 pt, տողերի հեռավորությունը՝ 1, էջի ֆորմատը՝ A4 (210 x 297 մմ), լուսանցքները. ձախից՝ 30 մմ, վերևից՝ 20 մմ, աջից՝ 15 մմ, ներքևից՝ 20 մմ: Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմից (alignment: Justify): Պարբերությունները սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ: Գրաֆիկներ օգտագործելիս անհրաժեշտ է կիրառել տեխնիկական այնպիսի միջոցներ, որոնք հոդվածի տպագրական էջադրման ժամանակ կբացառեն գրաֆիկի՝ հնարավոր աղավաղումները:

Հղումները պարտադիր են. տրվում են տողատակում (բնական և տեխնիկական գիտությունների պարագայում՝ հոդվածի բուն տեքստից հետո՝ «Գրականություն» վերտառությամբ)՝ 8 pt տառաչափով, տողերի հեռավորությունը՝ 1: Հղման տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմից (alignment: Justify): Հղման մեջ պետք է ներկայացված լինեն օգտագործված աշխատանքի հեղինակի ազգանունը և անվան առաջին տառը (թավ տառերով՝ Bold), այնուհետև՝ աշխատանքի վերնագիրը, հրատարակման վայրը, թվականը, օգտագործած ինֆորմացիայի էջը (բնական գիտությունների պարագայում՝ հղվող աշխատանքի էջերի ընդհանուր թիվը):

Հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը պարտադիր են. հոդվածի տեքստից մեկ տող հետո 10 pt տառաչափով տրվում են հեղինակ(ներ)ի Անուն Ազգանուն(ներ): Մեկ տող բաց թողնելով՝ տողի մեջտեղում 10 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) հայերենով գրվում է հոդվածի վերնագիրը: Հաջորդ տողի կենտրոնում գրվում է «Բանալի բառեր» արտահայտությունը, և տրվում են բանալի բառերը՝ 5-10 բառեր կամ բառակապակցություններ (հասկացություններ, առանցքային բառեր կամ արտահայտություններ), որոնք հնարավորինս ամբողջականորեն և յուրահատուկ կերպով բնորոշում են գիտական հոդվածի կամ դրա առանձին մասերի բովանդակությունը: Այնուհետև մեկ տող թողնելով՝ 50-60 բառի սահմաններում համառոտ ներկայացվում է հոդվածի ամփոփագիրը (հիմնական էությունը՝ նպատակը, խնդիրները, արդյունքը/եզրակացությունը):

Հայերեն ամփոփագրի օրինակով պարտադիր է նաև ռուսերեն և անգլերեն ամփոփագրերի ներկայացումը՝ համապատասխան բանալի բառերով: Օտարալեզու հոդվածի դեպքում հայերեն ամփոփագիրը պարտադիր է:

Հոդվածն անհրաժեշտ է տպագիր և էլեկտրոնային տարբերակներով ներկայացնել ֆակուլտետի ՌԻԳԸ նախագահին կամ ԵՊՀ ՌԻԳԸ կենտրոնական գրասենյակ (Ա. Մանուկյան 1, ԵՊՀ կենտրոնական մասնաշենք, 6-րդ հարկ, 608 սենյակ) կամ էլ ուղարկել ՌԻԳԸ էլեկտրոնային փոստի հասցեին՝ sss@ysu.am:

Հոդվածին պարտադիր պետք է կցված լինեն գիտական ղեկավարի կարծիքը և համապատասխան ամբիոնի վարիչի կամ գիտական կենտրոնի կողմից տրված երաշխավորագիրը: Եթե հոդվածը ներկայացվում է էլեկտրոնային փոստով, ապա անհրաժեշտ է ուղարկել նաև երաշխավորագրի սքանավորված տարբերակը:

Վերը նշված չափորոշիչներին չհամապատասխանող հոդվածները չեն տպագրվում:

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>ԵՊՅ ռեկտոր Արամ Սիմոնյանի խոսքը</i>	3
Ներածություն	4
ԳԼՈՒԽ 1. ԳԻՏԱԿԱՆ ՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏԱ- ՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	5
1.1. Գիտահետազոտական աշխատանքի ընդհանուր մեթոդաբանությունը	6
1.2. Գիտահետազոտական աշխատանքների տարատեսակները և դասակարգումը	14
ԳԼՈՒԽ 2. ՓԱՍՏԱՐԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԹՈՂԱ- ԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆԸ	23
2.1. Փաստարկման ընդհանուր տրամաբանությունն ու մեթոդաբանությունը գիտական աշխատանք կատարելիս Զոն Միրշայմերի «Դարձ դեպի ապագա. անկայուն Եվրոպան Սառը պատերազմից հետո» հոդվածի օրինակով.....	23
2.2. Հղումները գիտական հրապարակումներում.....	30
2.3. Գրագողություն.....	46
Վերջաբանի փոխարեն. գիտահետազոտական աշխատանք գրելու ընդհանուր սկզբունքներ	59
Հավելված 1. Գիտահետազոտական աշխատանք կատարելիս առավել հաճախ հանդիպող հասկացություններ	63
Հավելված 2. Կուրսային և ավարտական աշխատանքների տիտղոսաթերթի օրինակելի նմուշներ	65
<i>ԵՊՅ ուսանողական գիտական ընկերություն. պատմությունը, նպատակը, գործառույթները</i>	67
<i>«ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու» գիտական հոդվածների ուսանողական պարբերականին տպագրության տրվող հոդվածին ներկայացվող պահանջները</i>	68

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գ. Հովհաննիսյան, Ն. Գալստյան, Մ. Սողոմոնյան, Մ. Մալխասյան

ԳԻՏԱՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Մեթոդական ցուցումներ

Խմբագիր՝ **Ռուբեն Մարկոսյան**
Համ. էջադրումը, ձևավորումը և սրբագրումը՝ **Միքայել Մալխասյանի**

Թուղթ՝ օֆսեթ: Տպագրություն՝ օֆսեթ:
Չափսը՝ 60x84 1/16: Տպագր. 4,5 մամուլ:
Տպաքանակ՝ 500:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

